



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՋԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ
ի հայրենիս եւ ի սփյուռս.

Մայր Աթոռ Սբ Էջմիածնից տա-
րեմուտի սեմին բերում ենք ձեզ
հայրապետական Մեր սերն ու
օրհնությունը:

Գոհաբանական մաղթանքով,
նոր հույսերով ու ակնկալիքներով
հրաժեշտ ենք տալիս 2015 թվա-
կանին: Անցնող տարին մեզ հա-
մար նվիրական եղավ Հայոց ցե-
ղասպանության 100-րդ տարելիցի
ոգեկոչումով: Հայրենի պետու-
թյան, մեր Եկեղեցու եւ ժողովրդի
ջանքերով աշխարհի բոլոր կողմե-
րում կազմակերպվեցին հիշատա-
կի միջոցառումներ: Ծիծեռնակա-
րբ հրապարակվեց մեր ար-
դար դատին հետամուտ լինելու եւ
հաղթանակի առաջնորդելու «Հա-
մահայկական հռչակագիրը»: Մայր
Աթոռ Սբ Էջմիածնում կա-
տարեցինք հավատքի եւ հայրենի-
քի համար մարտիրոսության
պատկն ընդունած մեր նահատակ-
ների սրբադասումը եւ սրբալույս
Մյուռոնի օրհնությունը: Հիշատա-
կի միջոցառումները հոգեւոր նոր
ուժ ու կորով բերեցին մեր կյան-
քին՝ առիթ դառնալով ազգային
համախմբման, մեր սրտերում հա-
վատքի ու հայրենյաց սիրտ գո-
րացման, ամրապնդելով արդա-
րության հասնելու վստահությունը
մեր ժողովրդի:

Անցնող տարում արձանագ-
րած հաջողությունների ու ձեռք-
բերումների հետ ունեցանք եւ դժ-
վարություններ ու հոգսեր. նաեւ՝
անհանգստություններ ու ցավալի
կորուստներ: Մեր ժողովուրդն
արժանապատվորեն, արիա-
սիրտ, միավորյալ ջանքերով դի-
մակայեց բոլոր մարտահրավեր-
ներին, պաշտպանեց հայրենի
երկրի սահմանները, մեր կյանքի
խաղաղությունը եւ թանկ գնով
ձեռք բերված նվաճումները:
Միասնության այս ոգով, սիրելի-

ներ, եւ լավատեսությամբ դիմա-
վորենք նոր տարին: 2016 թվա-
կանին Հայաստանում եւ Արցա-
խում տոնախմբելու ենք մեր ան-
կախ պետականության վերա-
կանգնման 25-րդ տարեդարձը:
Ազգի եւ մեր պետության հզորու-
թյան նախանձախնդրությամբ
Հայրենիքում եւ Սփյուռքում մի-
մյանց աջակից՝ ամեն կարելիու-
թյուն ներդնենք՝ շենացնելու մեր
երկիրը, բարձր դարձնելու մեր
կյանքը եւ լուսավոր՝ մեր ապա-
գան:

Տարեմուտի այս երեկո՝ Սբ Ծնն-
դյան նախասեմին, առատացնենք
մեր աղոթքը՝ աշխարհի, մեր երկրի
ու ժողովրդի խաղաղ եւ ապահով
կյանքի համար: Հիշենք կարո-
տյալներին, նեղյալներին, հի-
վանդներին եւ վշտացյալներին,
Մերձավոր Արեւելքում պատե-
րազմական փորձությունները
կրող մեր եղբայրներին ու քույրե-
րին եւ մեր երկրի սահմանամերձ
շրջաններում ապրող մեր ժողովր-
դի զավակներին՝ մեկնելով նրանց
սատարումի ու աջակցության մեր
ձեռքը: Աղոթք բարձրացնենք
մարտերում հերոսաբար զոհված
մեր որդիների, մեր երկրի սահ-
մաններն անձնվիրումով պաշտ-
պանող քաջարի մեր բանակի զին-
վորների եւ հրամանատարների
համար:

Առ Աստված աղոթքով հայցում
ենք նոր ձեռքբերումներ հայրենի
իշխանություններին, մեր Եկեղե-
ցու սպասավորներին, մեր ժո-
ղովրդի բոլոր զավակներին: Ա-
պահովություն՝ ընտանիքներին,
պանծալի եւ բարի ծառայություն՝
մեր բանակի մարտիկներին, երկ-
նային շնորհ եւ սեր՝ մեր մանուկ
ու երիտասարդ զավակներին,
օրհնություն՝ համայն հայոց
կյանքին:

Ընորհավոր Նոր տարի: Բարի
եւ օրհնյալ տարի:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՎԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 6-ին Հիսուս
Քրիստոսի Ծննդյան եւ Աստ-
վածհայտնության տոնի ա-
ռիթով Մայր տաճարում մա-
տուցվեց սուրբ եւ անմահ
Պատարագ:

Տաճարի զանգերի ավետա-
բեր դողանջների ներքո հայ-
րապետական թափորը Վե-
հարանից Ն. Ս. Օ. Տ. Տ. Գա-
րեգին Բ Ծայրագույն Պատ-
րիարք եւ Ամենայն Հայոց Կա-
թողիկոսին եւ Հայաստանի
Հանրապետության նախա-
գահ Սերժ Սարգսյանին
ամպիոնակիով առաջնորդեց
Մայր տաճար:

Հայրապետական ամպիո-
նակին կրում էին Հայ Եկեղեցու
բարերարներ Սիբայել եւ Կա-
րեն Վարդանյանները, «Արմենպրես»
լրատվական գոր-
ծակալության տնօրեն Արամ Անանյանը եւ «Կոնվերս
բանկ» ՓԲԸ գործադիր տնօրեն Տիգրան Դավթյանը:
Նորին Սրբությանն արարողության ժամանակ, որ-
պես առընթերականեր, սպասավորում էին Մայր Ա-
թոռի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանը եւ
Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ Եպս Բաբայանը:

Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոսն իր պատգամն ուղղեց աշխարհասփյուռ հա-
մայն հայությանը՝ ամենքին փոխանցելով «Քրիստոս
ծնաւ եւ յայտնեցաւ» բարի ավետիսը:

Ս. Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոսը հանդիսապետեց նաեւ Ջորջիների արարո-
ղությունը՝ ի հիշատակ Հորդանան գետում Հիսուս
Քրիստոսի մկրտության:

«Յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգ-
ւոյն Սրբոյ. ամեն»:

«Փառք ի բարձունս Աստուծոյ,
եւ յերկիր խաղաղութիւն, ի մար-
դիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,
Սուրբ Ծննդյան ավետիսն այսօր
առաջնորդել է մեզ դեպի մեր Եկե-
ղեցիները, որպեսզի խնդրությամբ
եւ հոգու երկյուղածությամբ խո-
նարիվենք մանուկ Հիսուսի՝ աշ-
խարհի Փրկչի սնարի առջեւ:

Բեթղեհեմի մտւում ծնվեց
Քրիստոս, եւ Փրկչի աշխարհ գա-
լով սկսվեց ճանապարհն Աստծո
հետ հաշտության, մեղքի պատճա-
ռով Նրանից հեռացած մարդկու-
թյան դարձի եւ փրկության: Իր Որ-
դու մարդեղության խորհրդով
Աստված մարդկանց ժառանգորդ
դարձրեց երկնից արքայության եւ
Նրա միջոցով ցույց տվեց այդ
փառքին արժանանալու ուղին՝
ըստ հրեշտակների օրհնաձայն
փառաբանության՝ «յերկիր խաղա-
ղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Մարդեղացյալ Աստվածորդին
իր փրկչական առաքելությամբ
շրջափոխեց պատմության ըն-



Ջորջիների խաչի կնքահայրն էր հրամանատար,
գնդապետ Ջալալ Հարությունյանը (ԼՂՀ ՊԲ): Պատա-
րագից հետո Մայր տաճարի խաչը հայրենիքի սահ-
մանների օրհնության համար տարվելու է տարբեր
գործարարներ:

Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ
նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ
Հովիկ Աբրահամյանը, ԱԺ պատգամավորներ եւ ՀՀ
կառավարության անդամներ, պետական բարձրաս-
տիճան այլ պաշտոնյաներ, Գերագույն հոգեւոր խոր-
հրդի անդամներ, Հայաստանում հավատարմագր-
ված օտարերկրյա դիվանագիտական առաքելու-
թյունների ղեկավարներ, հասարակական գործիչ-
ներ, կրթության, գիտության եւ մշակույթի ներկայա-
ցուցիչներ:



թացքը՝ կոչելով մարդկանց սիրո
եւ խաղաղության սկզբունքի
վրա հաստատելու կյանքը:
Քրիստոս մարդկանց պարգետում
է այս աշխարհում մեծագույն
բարիքը՝ Իր խաղաղությունը.
«Խաղաղություն եմ թողնում
ձեզ, Իմ խաղաղությունն եմ տա-
լիս ձեզ, ձեզ չեմ տալիս՝ ինչպես
այս աշխարհն է տալիս, ձեր սր-
տերը թող չխռովվեն, եւ չվախե-

նաք» (Հովհ. ԺԴ 27),- ասում է
մեր Տերը:

Փրկչի խաղաղության կոչին ու
հրավերին հանդիման՝ մեր ժամա-
նակի մեծագույն մարտահրավեր-
ներից է անհատի, հասարակու-
թյան ու պետության կյանքում
խաղաղության խաթարումը:
Մարդկությունը 21-րդ դար թեւա-
կոխել է մեծ տագնապներով:

Շարունակությունը՝ էջ 2

Ամանորի գիշերը կատարվեցին Գոհաբանական մաղթանք եւ Նռնօրհներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հա-
յոց Կաթողիկոսի օրհնությամբ՝ Ամանորի գիշերը՝ ժամը 24:00-ին,
Մայր Աթոռ Սբ Էջմիածնում եւ Հայ Եկեղեցու բոլոր տաճարներում կա-
տարվեցին Գոհաբանական մաղթանք եւ Նռնօրհներ:

Նռնօրհների համար նախատեսված նուրբ Մայր տաճարին ընծայել
էին ԼՂՀ իշխանությունները:

Ճրագալույցի Պատարագ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Մեր Տեր Հիսուս Զրիստոսի Ս. Ծննդյան եւ Աստվածայտնության տոնի առիթով հունվարի 5-ի երեկոյան Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ճրագալույցի ս. Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս հաջատրյանը:

Արարողության ընթացքում սրբազան հայրը քարոզեց Զրիստոսի ծննդյան եւ աստվածայտնության խորհրդի եւ մարդկային կյանքում նրա նշանակության մասին:



Իր խոսքում սրբազանը մասնավորապես խոսեց մարդկային կյանքի ամենաբնորոշ հատկանիշներից մեկի՝ սպասման մասին. «Կյանքը սպասում է, տեսնագին սպասում: Մենք միշտ սպասման մեջ ենք՝ երբեմն բարի լուրերի ու ավետիսների, իսկ երբեմն էլ՝ գույժի ու դժբախտության:

Մարդիկ սպասման մեջ էին նաեւ ավելի քան 2000 տարի առաջ. նրանք սպասում էին ավելի լավ ու երանելի կյանքի: Այսպիսի սպասումների մեջ էին նաեւ մի քանի հովիվներ, ովքեր դաշտերում արածեցնում էին իրենց խաշները: Այստեղ այցելեց հրեշտակը, համաձայն Դուկաս ավետարանի պատումի, եւ նրանց ավետեց Զրիստոսի ծնունդը: «Մի վախեցե՛ք,- դիմեց նրանց հրեշտակը,- բանգի ես ձեզ մեծ ուրախության ավետիսն եմ փոխանցում, ուրախության, որ լինելու է բոլոր մարդկանց համար»: Զրիստոս ծնվեց, ծնվեց՝ որպես իրագործում Աստծու խոստման, որպես պատասխան մարդկային սպասումի, եւ սա է ավետման ուրախությունը, ուրախություն, որ ինչպես հրեշտակն է ասում, բոլորինս է: Եվ այս ուրախությունն է հազարավոր անգամներ, անընդմեջ ու շարունակաբար փոխանցվում եկեղեցիներից, ծավալվում տներում ու հրապարակներում, բակերում ու փողոցներում, բայց մարդիկ շարունակ տխուր ու տխուր են, դժբախտ ու հոգնած, վախեցած ու տազնապահար: Որքան դժվար է այսօր ուրախանալ, որքան դժվար է մնալ լավատես: Տառապանքը, կարծեք, գրոհել է աշխարհ»:

Անդրադառնալով Հիսուս Զրիստոսի սուրբծննդյան ավետիսով բաշխվող ուրախությանը՝ Արշակ սրբազանն ընդգծեց. «Եվ արդ, ուրախությունը տազնապանների ու վախերի, տառապանքների ու ողբերգությունների մոռացումը չէ, դրանց հաղթահարումը չէ եւ ոչ էլ դրանց բացակայությունը: Լինել ուրախ նշանակում է վայելել Տիրոջ մնայուն ներկայությունը, զգալ Աստծու մշտական խնամքն ու աջակցությունը, ապրել կյանքն Աստծու հետ: Էմմանուել է մանուկ Հիսուսի անունը, որ նշանակում է՝ Աստված մեզ հետ: Աստծու՝ մեզ հետ լինելու վստահությունն ու հավատքն են աղբյուրն ուրախության: «Տերն իմ օգնականն է, եւ ես չպիտի վախենամ», - ասում է Պողոս առաքյալը:

Մահերն ու տառապանքները մարդկանց ուղեկիցներն են մարդկության պատմության ողջ ընթացքում: Մարդը դատապարտված է տառապանքի ու մահվան, ամենանվիրական երազանքներն իսկ խեղդվում են խանձարոտում, բայց Տերը մեզ խոստում է տվել միշտ լինելու մեզ հետ՝ ուրախության թե տխրության օրերին, հաջողության թե ձախողության մեջ»:

Վերջում սրբազանը հորդորեց ներկաներին կյանքի տառապանքներն ու ձախողությունները չդարձնել պատրվակ Տիրոջ ուրախությունից հեռանալու, որովհետեւ ուրախությունը մեզ հետ է Տիրոջ ներկայությամբ, իսկ Տիրոջ ծննդյան ավետիսն Իր մշտական խնամքի ու հոգատարության անլուծելի դրոշմն է:

Պատարագի ավարտին կատարվեց նախատոնակ, որից հետո Ամենայն Հայոց Հայրապետը Տիրոջ սուրբծննդյան ու աստվածայտնության ավետիսը եւ Մայր տաճարի ավագ խորանից լույսը փոխանցեց ներկա բարեպաշտ ժողովրդին, որպեսզի իրենց հարկերը պայծառացնեն Տիրոջ սուրբծննդյան ավետաբեր եւ կենդանարար լույսով:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՏՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սկիզբը՝ էջ 1

Հակամարտություններ, աշխարհաքաղաքական շահերի բախում, ճգնաժամեր, հումանիտար աղետներ շարունակում են հուզել աշխարհը, սերմանել անհանդուրժողություն ու անվստահություն, սփռել ավերածություն, աղքատություն, տառապանքներ: Հասարակություններում խաթարվում են բարքերը, խեղաթյուրվում հոգեւոր-քարոյական արժեքները, առավել տարածում են գտնում կեղծիք, մոլություններ, սպանություններ, սասանվում են ընկերային կյանքի, ընտանիքի հիմքերը: Ծայրահեղական գաղափարներ քարոզող ահաբեկչական խմբավորումները հավատքի անուսով մահ ու ավեր են սփռում հատկապես Մերձավոր Արեւելքում, որտեղ այլ ժողովուրդների կողքին տառապում եւ զրկանքներ են կրում նաեւ մեր ժողովրդի զավակները:

Կործանարար ու կորստաբեր այս իրավիճակներից մարդկությունը ելք եւ կարգավորման ուղիներ է փնտրում, որոնց անորոշության մեջ, բարձրացող հարցականների առջեւ այսօր քաղցրորեն հնչում է մեր հոգիներին Բեթղեհեմում աշխարհ եկած Փրկչի հուսադրող խոսքը: «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն



դաղությունը է սերմանվում նրանց համար, ովքեր խաղաղություն են անում» (Հակ. Գ 17):

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր, հայրենական մեր կյանքում ես ծառացած է խաղաղության պահպանման հրամայականը: Տարիներ շարունակ մեր երկիրը գտնվում է շրջափակման մեջ՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից: Վերջինս մեր սահմաններում սադրանքների է դիմում՝

Աստծո օրհնությամբ, որը կարող է մեզ համար անհնարինը հնարավոր դարձնել: Պարտավորվածությունից առավել թող մեզ առաջնորդի ծառայության, սիրո ու նվիրումի ոգին, որով ծնունդ առած մեր գործերը հանապազօրյա անհրաժեշտություն են՝ իրականացնելու համար ազգային գարթոնքի, լուսավոր գալիքի մեր տեսիլքները:

Մեր Փրկչի Ծննդյան այս սուրբ օրը բերկրությամբ լեցուն մեր հոգիներից միասնաբար աղոթք բարձրացնենք երկնք, որ Զրիստոս մեր Տերը երկնային շնորհներով, հավատքով, հույսով ու սիրով գորացնի մարդկանց հոգիները՝ կերտելու ապահով, խաղաղ ու բարձր աշխարհ, խաղաղ պահի նաեւ մեր երկիրն ու ժողովրդին, օրհնի մեր կյանքն այս աշխարհում եւ առաջնորդի դեպի հավիտենական կյանքի լույսը:

Զրիստոսի Սբ Եկեղեցու հանապազ աղոթքն ու մաղթանքն ենք, իբրեւ պատգամ, կրկին հնչեցնում՝ «Խաղաղություն ամենեցուն»:

Սբ Ծննդյան մեծաքանակ ավետիսով ողջույն ենք հղում Առաքելական մեր Սբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արք. Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արք. Մուրադյանին, քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին: Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք Սբ Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանին, ողջույն ենք հղում Լեւոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր օրհությունն ենք բերում աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդին՝ հոգու բերկրությամբ ողջունելով.

«Զրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:



եւ տալիս ձեզ, ձեզ չեմ տալիս՝ ինչպես այս աշխարհն է տալիս»: Զրիստոսի պարգեւածը այս աշխարհի խաղաղությունը չէ, որն անհաստատ է եւ անկայուն: Զրիստոսի խաղաղությունը հոգու խաղաղությունն է, որ խարսխված առ Աստված հավատքի, Աստծո խոսքի ու պատվիրանների վրա. վերափոխում է կյանքը: Այն բնակվում է անչար սրտում, ճշմարտության, արդարության մեջ, զորանում է հավիտենական կյանքի հույսով ապրող հոգիներում: Այս իմաստով առաքյալն ասում է. «Եվ Աստծո խաղաղությունը, որ վեր է, քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը եւ մտածումները Հիսուս Զրիստոսով» (Փիլ. Դ 7): Արդարեւ՝ կյանքը կանգուն է Աստծո սիրով լեցուն հոգու խաղաղությամբ: Ամեն բան անհաստատ է, երբ մարդկանց մեջ տկարանում է Աստծո ներկայության զգացումը, երբ մարդկային առնչություններից միջև ազգերի ու պետությունների հարաբերություններ կառուցվում են սոսկ սեփական շահերի ու ձգտումների կամ պարտադրանքի վրա: Գտնել Զրիստոսի խաղաղությունը նշանակում է ունենալ սեր եւ երջանկություն ընտանիքներում, համերաշխություն ու բարօրություն հասարակությանը ու պետությանը մեջ: Մարդեղացյալ Աստվածորդին բոլոր դարերում եւ բոլոր ժողովուրդների կյանքում պարգեւում է գորությունը՝ իրագործելու Աստծո հետ հաշտության եւ մարդկանց մեջ հաճության պատգամը, պարգեւում է գորությունը՝ ընդունելու երկնային փրկարար շնորհները, որոնք բնակվում են մեր մեջ, երբ համախմբված են խաղաղություն, արդարություն հաստատելու, աջակցություն եւ միախառնություն բերելու: «Արդարության պտուղը խա-

ձգտելով ոտնահարել Արցախի ժողովրդի ազատ ապրելու իրավունքը: Հավատում ենք, որ խաղաղության նախանձախնդրությամբ եւ առ Զրիստոս հավատքով գորացյալ՝ մեր ժողովուրդն իր հոգու խաղաղությունը պիտի պատվար դարձնի ընդդեմ թշնամյաց հարձակումների, անխորտակելի վահան՝ ընդդեմ հայրենյաց սահմանների ոտնձգությունների՝ հերոսաբար պաշտպանելով մեր երկիրն ու սրբազան արժեքները եւ կուռ ու միասնական ոգով ներդնելով իր ջանքերը դժվարությունները հաղթահարելու, շենացնելու մեր հայրենիքը եւ աշխարհասփյուռ մեր կյանքը: Սիրելիներ՛, Զրիստոս է մեր գորությունը: Ամենակամ, անվարան հավատքով հետեւենք մեր Տիրոջ պատգամներին: Մեր Փրկչի քաջալերող խոսքի համաձայն՝ թող մեր սրտերը չխռովվեն, եւ չվախենանք: Ապավինենք ոչ միայն մարդկային մեր տկար ուժերին, այլեւ



Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Եռաբլուր



Դեկտեմբերի 30-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հետ եւ ուղեկցությամբ հոգեւորականների ու պետական ավագանու, այցելեց Եռաբլուր պանթեոն: Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակների գետեղումից հետո աղոթեց՝ վասն հայրենիքի անկախության գոհված հայորդիների հոգիների խաղաղության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի պաշտոնեությունը



Հունվարի 8-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դահլիճում ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեությանը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանի:

Հանդիպումն սկսվեց Մուշեղ սրբազանի բացման խոսքով: Ընդհանրապես Նորին Սրբությանը եւ Մայր Աթոռի աշխարհիկ աշխատակիցներին՝ բերկրալի տոների առիթով, սրբազան հայրը մասնավորապես ընդգծեց, որ Մայր Աթոռի յուրաքանչյուր պաշտոնյա իր ծառայությունը Մայր Եկեղեցու հոգեւոր կենտրոնում իրականացնում է սիրով ու նվիրումով:

Այնուհետեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի պաշտոնեության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորական խոսք ուղղեց «Իզմիրյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն Արմեն Զարցյանը:

Հանդիպմանը Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով ներկաներին շնորհավորեց եւ իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Մայր Աթոռի աշխատակիցներին՝

Սբ Էջմիածինն իրենց տունը եւ ազգի սեփականությունը նկատելու բարձր գիտակցության, ինչպես նաեւ նախանձախնդիր ծառայության համար:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ շնորհիվ այդ նվիրյալ ծառայության՝ անցյալ տարում արձանագրվեցին բազում հաջողություններ, արժանապատվությամբ եւ գիտակցության բարձր զգացումով իրականացվեցին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի բոլոր արարողությունները:

«...Հավատում ենք, որ յուրաքանչյուր բարի գործ արժանանում է մեր նախնիների, մեր հայրերի օրհնությանը, իսկ այդ օրհնությունը մեր կյանքի է՝ բերկրանքն է, ե՛ւ ուրախությունը, ե՛ւ ցնծությունը, ե՛ւ հաջողությունը: Ուրեմն արժանի լինե՞ք մեր հայրերի օրհնությանը մեր կյանքով եւ մեր աշխատանքով...»

Այս հավատն ու վստահությունն ունենք եւ կարծում ենք, որ եթե յուրաքանչյուրս նոր տարում այս հավատով, այս վստահությամբ ընթանանք, ավելիով կփոխենք մեր կյանքը դեպի լավը, դեպի բարին եւ ցանկալին», - Լեզե Գարեգին Բ Հայրապետը՝ մաղթելով, որ Աստված քաջառողջություն, ուրախություն եւ արդյունավոր աշխատանք պարգևի ամենքին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց սարկավազական ձեռնադրություն

Դեկտեմբերի 26-ին՝ Սբ Ստեփանոս Նախավկայի տոնին, Միածնաէջ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ, որի ընթացքում կատարվեց նաեւ սարկավազական ձեռնադրություն: Պատարագին էր Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Նավասարդյանը:

Վարդան սրբազանի ձեռամբ՝ սարկավազական ձեռնադրության արժանացավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Զահանայից պատրաստության լսարանի 20 սան:

Սրբազան հայրը ձեռնադրության խորհրդից հետո ներկայացրեց տոնի իմաստն ու ս. Ստեփանոսի նախատախանքի պատմությունը՝ նշելով, որ Հայ Եկեղեցին այսօր ոգեկոչվում է Ընդհանրական Եկեղեցու առաջին նախատակ ս. Ստեփանոսի հիշատակը, ով իր կենսաբար աշխատեց Զրիստոսի Եկեղեցու հիմքերն ամրացրեց:

Անդրադառնալով Ղուկաս ավետարանչի կողմից Գործք առաքելոցում ներկայացված պատմությանը՝ Վարդան սրբազանը կարեւորեց, թե ինչպես են առաքյալներն ընտրել առաջին յոթ սարկավազներին, ովքեր առանձնանում էին մաքուր վարքով, առաքինի եւ աստվածահաճ գործերով:

«Նրանցից մեկն էր ս. Ստեփանոս սարկավազը, որ իր առաքինասեր ընթացքով, հավատքի ամուր վկայությամբ կարողացավ քաջ լինել, չփախվել, հույսը չկորցնել, այլեւ՝ Տիրոջ վկայություն մատուցել անգամ սեփական արյան գնով:

Այսօր այդ մեծագույն սրբի՝ մեր Եկեղեցու հոգեւոր գարնան հիշատակության օրն է, եւ ամենքս վկան ենք Հայ Եկեղեցու պայծառացման ու հաղթարշավի հերթական կենդանի վկայությանը», - ընդգծեց սրբազան հայրը:

Դիմելով Նորաձեռնադրյալներին՝ սրբազան հայրը կոչեց նրանց հետեւելու ս. Ստեփանոսի մարտիրոսական, խորհրդավոր, անսակարկ, ազնիվ, հեզ ու մաքուր հոգեւոր ծառայությանը:

Իր խոսքում Վարդան սրբազանը, անդրանիկ սարկավազական ձեռնադրություն կատարելու կապակցությամբ, իր որդիական երախտագի-



տությունը հայտնեց Գարեգին Բ Հայրապետին՝ ուրախությամբ ընդգծելով, որ Հայ Եկեղեցին այս ձեռնադրությամբ ավելի է երիտասարդանում, պայծառանում, եւ առավել որակյալ է դառնում նաեւ հոգեւոր Եկեղեցին:

Պատարագի ավարտին Եկեղեցականաց դասը եւ ներկա ժողովուրդը հնարավորություն ունեցան համբուրելու տոնի առիթով Մայր տաճարի ավանդատուն-թանգարանից հանված ս. Ստեփանոսի մասունքով Աջը եւ ստանալու նրանից ճառագող օրհնությունը:

Պատարագից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի բոլոր սարկավազներին ու Նորընծաներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանի, Վարդան Եպս Նավասարդյանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանի:

Անդրադառնալով ս. Ստեփանոսի առաքինի ու աստվածընկալ կերպարին՝ Ամենայն Հայոց Հայրապետը մասնավորաբար ասաց. «Հայ Եկեղեցում այսօր ուրախության եւ ցնծության օր է, եւ հոգու բերկրանքը տարածվում է յուրաքանչյուրիս սրտում: Մենք միասնաբար տոնախմբում ենք Ս. Ստեփանոսի տոնը: Նա պատկառելի անձ էր, ով եղավ առաջին մարտիրոսը՝ ի սեր մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Զրիստոսի՝ հաղթության ուղին հարթելով Սբ Եկեղեցու համար: Առանձնակի կարեւորությամբ ենք նշում այս տոնը, որպեսզի ս. Ստեփանոսի նախատախանքի աստվածահաճ խորհուրդը խորությամբ ընկալվի բոլորի կողմից: Ս. Ստեփանոսի բարի օրհնակով Հայ Եկեղեցում սպասավորող սարկավազներն իրենց առաքելատիպ վարքով պետք է ապահովեն Տիրոջ Ս. Եկեղեցու առաքելության շարունակականությունը»:

Նորին Սրբությունը մաղթեց, որ սարկավազաց դասը ներշնչվի ու ոգեւորվի քաջ Նախասարկավազի նվիրումի, մարտիրոսանալու լուսազարդ կերպարով, որպեսզի ս. Ստեփանոսի անկոտրում ոգին առաջնորդող լինի իրենց ստանձնած առաքելության եւ Եկեղեցազործության ողջ շրջանում:



Եվրոպայի հայկական դպրոցներին

Ամանորի եւ Սբ Ծննդյան տոների առիթով, Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հարյուր հազար ԱՄՆ դոլար է փոխանցել Դամասկոսի հայոց թեմին՝ Սիրիայի հայկական դպրոցների համար:

ՀԵՀԵՄ-ի Եվրոպայի տարածաշրջանի ընդլայնված ներկայացուցչական ժողովը

Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ դեկտեմբերի 17-18-ը Իտալիայի Բոլոնիա քաղաքում առաջին անգամ տեղի ունեցավ Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման (ՀԵՀԵՄ) Եվրոպայի տարածաշրջանի ներկայացուցչական ժողովը՝ ընդլայնված կազմով: Համաժողովը նախագահում էր ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ եւ ՀԵՀԵՄ-ի հոգեւոր պատասխանատու Հովհան արք. Տերտերյանը:

Ժողովը կազմակերպել էին Եվրոպայի ՀԵՀԵՄ-ի տարածաշրջանային հոգեւոր

տեսչությունը, Իտալիայի հայոց հովվությունը եւ մասնավորապես Բոլոնիայի հայ համայնքը: Ժողովի կազմակերպմանն ու ընթացքին իրենց կարեւոր մասնակցությունն էին բերել ՀԵՀԵՄ կենտրոնական գրասենյակի վարիչ-տնօրեն Գեւորգ Մկրտչյանը եւ տնօրենի օգնական Սերոբ Գալստյանը:

Եվրոպայի բազմաթիվ երկրներից Բոլոնիա քաղաք էին ժամանել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու՝ Եվրոպայի թեմերի եւ հովվությունների երիտասարդաց միությունների ներկայացուցիչները: Ժողովին ներկա էին ՀԵՀԵՄ կենտրոնական

խորհրդի ներկայացուցիչները՝ ատենապետ Վահան Մարդյանի գլխավորությամբ:

Ժողովին իրենց մասնակցությունը բերեցին նաեւ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթև Եպս Հակոբյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ, Իսպանիայի եւ Պորտուգալիայի հոգեւոր հովիվ Սասուն Ժ. վրդ. Չմրուխտյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ եւ Բելգիայի հայոց հոգեւոր հովիվ Չատիկ վրդ. Ավետիքյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխա-

նորդ եւ Իտալիայի հայոց հոգեւոր հովիվ, ինչպես նաեւ ՀԵՀԵՄ-ի Եվրոպայի տարածաշրջանային հոգեւոր պատասխանատու Թովմա վրդ. Խաչատրյանը, Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Խորեն վրդ. Առաքելյանը, Իտալիայի՝ Հռոմի համայնքի հոգեւոր հովիվ Անանիա արք. Ծատուրյանը, Դանիայի հոգեւոր հովիվ Ստեփանոս քնն. Հովհաննիսյանը, Ռումինիայի հայոց թեմի քարտուղար Հեթում քնն. Թարվերդյանը, Արցախի թեմի հոգեւոր սպասավոր Արթուր սրկ. Խունտյանը:

Շարունակությունը՝ էջ 4

Հայտնի է, որ մինչև 4-րդ դարը բոլոր քրիստոնյաները Զրիստոսի ծնունդն ու Հայտնությունը միասնաբար նշում էին հունվարի 6-ին, ինչպես հաստատում են թե՛ հույն, թե՛ լատին մատենագիրները:

5-րդ դարից Արեւմտյան Եկեղեցիները Զրիստոսի ծնունդն ունեն սկսեցին նշել դեկտեմբերի 25-ին: Այդ օրը նշվում էր հեթանոսական՝ Արեւի աստծո (Միթրայի) ծննդյան օրը: Եվ Զրիստոսի ծննդյան օրը դեկտեմբերի 25-ին տեղափոխելով՝ Արեւմտյան Եկեղեցին հույս ուներ ազատվել հեթանոսական տոնից՝ փոխարինելով այն իսկական Արեւի՝ Զրիստոսի ծննդյան տոնով: Այդպիսով՝ դեկտեմբերի 25-ին սկսեցին նշել Սբ Ծնունդը, հունվարի 6-ին՝ Մկրտությունը: Հայ Եկեղեցին, հավատարիմ մնալով ավանդությանը, շարունակեց նշել երկուսը միասին՝ մեկ՝ հունվարի 6-ի ամսաթվով: Պատմ. գիտ. դոկտ. Ռ. Վարդանյան իր «Հայոց տոնացույցը» (Ե., 1999) աշխատության մեջ ցույց է տալիս, որ հայերը Զրիստոսի ծննդյան եւ Հայտնության տոնական 8 օրերն անշարժ տոնական օրով՝ հունվարի 6-13-ը, կատարում էին հնագույն շրջանից սկսած, եւ դա շարունակվեց նաեւ հետագայում՝ չհաշված որոշ ժամանակավոր ընդհատումները: Միաժամանակ տոնելու տվյալությունը, մասնավորապես, խախտվել ու երկու տոնական օրվա է վերածվել հավանաբար Սահակ Կաթողիկոսի եւ Մաշտոց վարդապետի մահից հետո: Զրիստոսի ծնունդը տոնվել է դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ին՝ մինչեւ Հռիփսեմ Մանդակունի Կաթողիկոսի կարգադրությունը: Ինչպես նշում է Ռ. Վարդանյանը, նա վերականգնեց հին ավանդույթը եւ Զրիստոսի ծնունդն ու Հայտնու-

թյունը սահմանեց կրկին մեկ օր կատարել, այն է՝ հունվարի 6-ին՝ դրանով կարգավորելով հայոց եկեղեցական տարվա սկզբի հարցը, նաեւ խմբագրեց հին «Կանոնք ընթերցուածոց»-ը՝ հայոց մեջ նոր տոնական օրեր ներմուծելով:

Ռ. Վարդանյանը գրում է, որ «Տաւն սրբոյ Յայտնութեան» հունվարի 6-ին անշարժ տոնական օրով տոնվելը եւ հայոց եկեղեցական տարվա սկիզբ համարվելը հիմնավորվում են Սահակ Կաթողիկոսի «Կանոնք ընթերցուածոց»-ի կատարած թարգմանության եւ խմբագրության, Անդրեասի 200-ամյա «Տոմար-տոնացոյցի», Եփրեմ Ասորու «Համաբարբառի», Հովհան Մանդակունու «Կանոնք ընթերցուածոց»-ի 2-րդ խմբագրության ու կանոնների տվյալներով: Հովհաննես Գաբրէլեանցի Կաթողիկոսը, ով 6-րդ դարի 60-ական թվականներին գրեց Զրիստոսի ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի մեկնությունը, նույնպես տարվա սկիզբ է համարել հունվարի 6-ը:

Ռ. Վարդանյանը նաեւ նշում է, որ ըստ հայկական սկզբնաղբյուրների՝ 630-ական թվականներից սկսած մինչեւ Հռիփսեմ Օծնեցին (8-րդ դար) հայոց տոնացույցի մեջ փոփոխություններ են կատարվել: Մանդակունու վերահաստատած կարգը խախտվել է Եգր Կաթողիկոսի եւ նրա հաջորդների ժամանակ, երբ «Արտեմուհայի ընթերցուածոց»-ի կիրառումով ընդունվել էին հունադավան եկեղեցու կողմից տոնվող մի շարք տոներ: Կիրակոս Գանձակե-

ցին իր «Պատմութիւն հայոց»-ում (Ե., 1961, էջ 54-55) վկայում է, որ Եգրը «փոխեաց զամենայն ուղղափառ կարգավորութիւն եկեղեցւոյ, եւ զընթերցուածն Յակոբայ եւ Կիրոզի, փոխանակ այնորիկ զԱրտեմուհի եղեալ, զոր յանդիմանեաց Սուրբ վարդապետն Յոհաննէս...», իսկ Օծնեցին «կարգեալ ընթերցուածն սրբոյն Յակոբայ եւ Կիրոզի եւ զամենայն տօնսն՝ որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի, եւ տօնեցին ի ԻԵ դեկտեմբեր ամսոյ Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն, զոր յայլ ազգս ծննդեան Տեառն տօնեին...»: Ռ. Վարդանյանը բնագրային տեղեկություններով ցույց է տալիս, որ Օծնեցին վերականգնել է միաժամանակ տոնելու ավանդական կարգը, որ խաթարվել էր Եգր Կաթողիկոսի օրոք: Օծնեցու գործերում հանդիպում ենք նաեւ հունվարի 6-ին կատարվող ջրի օրհնության կանոնին:

Անդրադառնալով 7-րդ դարի հայ մատենագիր Ամանիա Շիրակացուն, ով իր տոմարական-տոնացուցային ժողովածուի հատվածներից մեկը նվիրել է Զրիստոսի ծննդյան եւ Հայտնության տոնին, անդրադարձել տոնի պատմությանը եւ հանգամանակից բացատրել «հունվարի 6, թե՛ դեկտեմբերի 25» խնդիրը:

«Ամանիա Շիրակունւոյ համարողի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ» ճառի հենց սկզբում կարդում ենք. «Բազում աշխատութիւն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տաւնից Աստու-



ծոյ էր յոր հասաք եւ զոր ճառել արժանաւոր եղաք...» (Ամանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944, էջ 283): Շիրակացին նշում է, որ նախ սկսում է Զրիստոս Աստծու ծննդյան տոնից, որ մեր տարեկան տոների առաջնեկն է: Ապա շարունակում է, որ Զրիստոսի ծնունդը Մկրտությունից 12 օր առաջ տոնելը կարգված չէ ո՛չ առաքյալների, ո՛չ էլ նրանց հաջորդների կողմից. «Տաւն սրբոյ ծննդեան Զրիստոսի, ԲԺ աւուր յառաջ քան զտաւն Մկրտութեանն, ոչ կարգեցաւ ի տուրք առաքելոցն, եւ ոչ նոցունց փոխանորդացն, որպէս եւ յայտնի է ի կանոնաց սրբոց առաքելոցն:

Շարունակությունը՝ էջ 5

ՆԵՆԵՄ-ի Եվրոպայի տարածաշրջանի ընդլայնված ներկայացուցչական ժողովը

Սկիզբը՝ էջ 3

Դեկտեմբերի 17-ին՝ մինչ ժողովի բացումը, կատարվեց Գիշերային ժամերգություն, որի ավարտին ողջունի խոսքով հանդես եկավ Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Թովմա վրդ. Խաչատրյանը:

Այնուհետև ժողովը պաշտոնապես սկսեց իր աշխատանքը Բոլոնիայի «Սենտ-բորոս» հյուրանոցում՝ Հովհան արք. Տերտրյանի օրհնության խոսքով:

Ողջունելով Եվրոպայի տարբեր կողմերից հավաքված երիտասարդներին՝ Հովհան արք. Խաչատրյանը ընդգծեց, որ նրանք կոչված են դառնալու Աստծու պաշտոնյաներ, որպեսզի քրիստոնեական սիրով առաջնորդված՝ լինեն դեսպանները Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու: Սրբազան ամենքի անուկից սրտի եւ երախտի քի ջերմ զգացումներ հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ով մշտապես օրհնում է Հայ Եկեղեցու երիտասարդությանը եւ քաջալերում ՀԵՅԵՄ-ի առաքելությունը:

«...Այսօր ՀԵՅԵՄ-ի պատմության մեջ բացվում է նոր էջ, եւ հաստատվում նոր հանգրվան, երբ սկիզբ է առնում Եվրոպայի հայոց թեմերի ՀԵՅԵՄ-ի ներկայացուցչական առաջին ժողովը, որն իրականություն է դարձել՝ շնորհիվ Եվրոպայի տարածաշրջանի երիտասարդների ՀԵՅԵՄ-ի պատասխանատու թովմա վրդ. Խաչատրյանի, ինչպես նաեւ Բոլոնիայի համայնքի ատենապետ տիար Ռոտան Անդրեասյանի նյութական աջակցության:

Բնականաբար՝ մեր խորին շնորհակալությունը բոլոր թեմակալ առաջնորդներին ու հոգևոր հովիվներին, ովքեր իրենց մասնակցությունն են բերում այս կարևոր ժողովին: ՀԵՅԵՄ-ի Եվրոպայի հոգևոր տեսչությունը 2015 թ. փետրվարին տարածաշրջանում նախապատրաստական ժողովներ կրավիրեց Բեռլինում, Բուխարեստում եւ Միլանում: Բոլոր այս քաղաքներում կազմակերպված ժողովների ընթացքում քաջալերական գորակցություն ունեցանք թեմակալ առաջնորդների ու հովիվների կողմից: Հավելենք, որ հիշյալ փետրվարյան ժողովների կազմակերպումը մեծապես նպաստեց ՀԵՅԵՄ-ի պատգամավորական երրորդ ժողովի գումարմանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Եվրոպայի տարածաշրջանի ներկայացուցչական առաջին ժողովը նկատում է արձանագրում ենք մեծագույն քայլ, որին



պետք է հաջորդի նաեւ երիտասարդների ավելի ընդարձակ խորհրդաժողով: Իսկ նպատակն Եվրոպայի ներկայացուցչական սույն ժողովի ՀԵՅԵՄ-ի ամրագրումն ու ընդարձակումն է թեմական եւ ծխական կյանքում, որպեսզի այն նորահաս սերունդին առաջնորդի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցի:

Մեր սպասումն է, որ առաջիկա երկու օրերի ընթացքում ժողովական կյանքին իր կանոնավոր ընթացքի հետ հավելենք նաեւ աղոթանվեր կյանք, որպեսզի ժողովն ընթանա ջանադիր աշխատանքով:

Մեր սիրելի՝ երիտասարդներ, Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին մեր կյանքում դարձնենք ծառայություն, ինչպես նաեւ միջոց՝ հասնելու մեր հոգևոր նպատակին»,- ասաց Հովհան արքեպիսկոպոսը՝ բարի երթ մաղթելով Եվրոպայի ՀԵՅԵՄ-ի տարածաշրջանի առաջին ժողովին:

Խոսքով հանդես եկան նաեւ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթև սրբազանը, Իսպանիայի եւ Պորտուգալիայի հոգևոր հովիվ հայր Սասունը եւ Բելգիայի հոգևոր հովիվ հայր Չասիկը:

Օրվա ավետարանական պատգամի շուրջ իր մտորումները ներկայացրեց Դանիայի հոգևոր հովիվ տեր Ստեփանոսը:

Բացման խոսքերից հետո տեղի ունեցավ ժողովի դիմանի ընտրությունը: Ժողովի ատենապետ ընտրվեց Ռումինիայի հայոց թեմից Հրանտ Ջաղիկյանը, ժողովի քարտուղար՝ Ավստրիայի համայնքից Օֆելյա Պավլովան:

Այնուհետև իրենց թեմերի ու համայնքների տարեկան միջոցառումները եւ ծրագրերը ներկայացրին Հունաստանից՝ Արսեն Սիմոնյանը եւ Վարդան Դարիբյանը, Բելգիայից՝ Հովսեփ Արոյանը, Հոլանդիայից՝ Անահիտ Բեգլարյանը եւ Սերոբ Այվազյանը, Եվելիայից՝ Սարգիս, Անի, Թամար Խաչատուրյանները եւ Գեորգ Եսթրիանը, Ֆրանսիայից՝ Գոռ Հախվերդյանը, Լեհաստանից՝ Ռոբերտ Նահապետյանը:

Կենտրոնական խորհրդի հանձնախումբը եւս ներկայացրեց ՀԵՅԵՄ-ի կառուցվածքը, գաղափարախոսությունը, կատարած աշխատանքներն ու հետագա անելիքները: Ժողովին զուգահեռ՝ Կենտրոնական խորհուրդն անցկացրեց իր առանձին ժողովը, որի ընթացքում որոշվեց առաջիկա տարում իրականացնել երկու կարևոր միջոցառում.

ա. Եվրոպայի տարածաշրջանի բոլոր թեմերի պարտադիր մասնակցությամբ Հայաստանում կազմակերպել հոգևոր ճամբար, որտեղ երիտասարդները կիրականացնեն նաեւ կամավորական աշխատանք եւ կմասնակցեն ուխտագնացությունների՝ Հայաստանի տարբեր եկեղեցիներ եւ վանքեր,

բ. կազմակերպել Եվրոպայի տարածաշրջանի ազգային, մշակութային, հոգևոր փառատոն:

Ժողովի երկրորդ օրը բացվեց Արեւագալի ժամերգությամբ: Ժամերգության ավարտին ժողովականներն աղոթեցին հայրենիքի սահմանները պաշտպանող հայ զինվորների ապահով ծառայության, ինչ-

պես նաեւ՝ զոհված զինվորների հոգիների հանգստության համար: Օրվա խորհրդի շուրջ իր պատգամը փոխանցեց Սասուն ծ. վրդ. Չմրուխտյանը:

Ժողովի երկրորդ օրվա ատենապետ ընտրվեց Ուկրաինայի հայոց թեմից Նելլի Ջշկունյանը:

Իրենց թեմերի ու համայնքների տարեկան միջոցառումների ու խնդիրների մասին խոսեցին նաեւ մնացյալ երիտասարդ ներկայացուցիչները. Գերմանիայից՝ Արագ Վարդանյանը, Ռումինիայից՝ Հրանտ Ջաղիկյանը եւ Մարիիրտա Կապլանյանը, Նորվեգիայից՝ Շուշաննա Սաֆարյանը եւ Անի Մարտիրոսյանը, Դանիայից՝ Մկրտիչ Չուկոյանը, Ավստրիայից՝ Օֆելյա Պավլովան, Անգլիայից՝ Չարեհ Մովսեսյանը, Ֆինլանդիայից՝ Գառնիկ Սարկարյանը եւ Ուրարտուիի Հակոբյանը, Ուկրաինայից՝ Նելլի Ջշկունյանը, եւ Իտալիայի հովվությունից՝ Արծրուն Պիվազյանը, Գեորգ Հովհաննիսյանը, Արամ Մանուսյանը եւ Թովմա վարդապետը:

Ժողովի արդյունքներն ամփոփեց Հովհան արք. Խաչատրյանը՝ սույն համաժողովի գումարումն ինքնին կարևոր արդյունք նկատելով:

Երախտագիտության խոսքով հանդես եկավ Տաթև սրբազանը՝ շնորհակալություն հայտնելով Հովհան արք. Խաչատրյանի եւ երիտասարդության հետ տարվող աշխատանքի համար, ապա շնորհավորեց սրբազան հոր քահանայապետության 35 եւ եպիսկոպոսական օծման 25-ամյակները:

Ժողովը փակվեց հաղաղական ժամերգությամբ:

Ժողովի հաջորդ օրը տեղի ունեցավ ուխտագնացություն Վենետիկի Սբ Խաչ եկեղեցի եւ Ս. Ղազար վանք: Վենետիկի Սբ Խաչ եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ այդ օրերին հայրենիքի սահմաններին զոհված հայ քաջարի զինվորների հոգիների հանգստության համար:

Կիրակի՝ դեկտեմբերի 20-ին, երիտասարդները Միլանի Ս. Քառասուն մանկանց եկեղեցում մասնակցեցին Տաթև սրբազանի մատուցած Պատարագին, որին ներկա էին նաեւ Միլանում ՀՀ պատվի հյուպատոս Պիետրո Զուլուկյանը, Միլանի հայ համայնքի ատենապետ Սարո Խուրադկերյանը եւ համայնքի բազմաթիվ անդամներ:

Լրատվականի նյութերը՝ ՍԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՍՏԵՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱԶ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 19-24

Եվ որքան է այդ սերը մարդկայնորեն գեղեցիկ, որ սիրած էակի երջանկությունը չի ուզում աղարտել իր սիրո ավերիչ շարունակությամբ, քանի որ արդեն առկա է քայլող մանկիկը՝ որպես իր հույսը մարող «քայլող արցունք» կամ «սիրո վերջակետ»:

Նույն այս տրամադրություններով են գրված նաեւ Նորահայտ այն նամակները, որոնց մեջ սիրո եւ գեղեցկության քաղցր վերհուշին միախառնվում են դառնակսկիծ խորհրդածություններն ու չմարող, անամոք ցավը:

Շիրազի մարդկային բնավորությունն էր նեղյալներին օգնության հասնելը՝ ինչով կարող էր: Ծանոթ կամ անծանոթ, սիրած կամ չսիրած պաշտոնատարներին կա՛մ զանգահարում անձամբ խնդրում էր իրեն դիմած անծանոթների համար, կա՛մ դիմում էր նամակով, կա՛մ էլ նրանց իր Նոր լույս տեսած (հները վաղուց չկային) գրքերն էր նվիրում՝ խնդրանքի բովանդակությունը սրամտորեն ձեւակերպած պատկերավոր մակագրությամբ:

Նամակներից մեկը 1976 թվագրումն ունի: Ծրարների վրա Շիրազին բնորոշ ամենապարզ հասցեն է, որով նամակը անվերել տեղ էր հասնում. «Երեւան, բժշկական ինստիտուտ, դասախոսուհի Իդային: Յ. Շ.» կամ՝ «Իդային: Յովհաննես Շիրազից»: Ահա եւ նամակներից մեկը.

«Սիրելի դասախոսուհի Իդա,

Գրաբերուհիս տենչալով տենչում է քեզ նման դառնալ... գալիքում,- ուստի հարկավոր է բարությունը այնպես, որ զորա-

վիզ դառնաս, որ նա դուրս չմնա բժշկականի բարձրագույնից եւ դառնա, գոնե, քո ստվերը:

Բազում վշտերս, որոնք քեզից սկիզբ առնելով են խուժել սիրտս, կարող են գեթ սփոփվել ողջ կյանքումդ ինձ մեկ, գեթ այս մեկ բարությամբ...

Յովհաննես Շիրազ

Յ. Շ.

Խնդրում եմ մեկ էլ կարդա «Սիրանամե»-ն:

Նույն:

1976 թ.»:

Նամակը երեք խնդիր է ներկայացնում. առաջին մասում բուն խնդրանքն է, երկրորդ մասում՝ իր եւ Իդայի հարաբերությունների վերաբարձումը: Իսկ հետգրությունն ակնարկում է «Սիրանամե» պոեմը, որտեղ 12-րդ դարի, Չաքարյանների դարաշրջանի հայ-վրացական հարաբերությունների համապատկերում, ճորտ բանաստեղծ ռուսթավի Շոթայի՝ Թամար թագուհու հանդեպ անձնվեր սիրո պատկերումով ներկայացված է հենց իր եւ Իդայի սիրո պատմությունը:

Նամակում Յովհ. Շիրազն Իդա Մովսեսյանին հենց այնպես, պատահականորեն չի գրել.

«Խնդրում եմ մեկ էլ կարդա «Սիրանամե»:

Նորից ենք կարդում եւ համոզվում, որ այդ պոեմում այլասացությամբ՝ Շոթա Թամար հարաբերությամբ՝ Իդա-բանաստեղծ սիրո պատմությունն է պատկերված: Եվ դա սկիզբ է առնում հենց նախերգանքից, ուր բանաստեղծն իր նվիրական գաղտնիքն է բացում՝ հասկանալի դարձնելով, թե ով է իրականում «իր Թամարը», որին կերպավորել է պոեմում.

Բայց իմացի՛ր, իմ հեռավոր, որ երգիս մեջ, աստղի պես՝

Դո՛ւ ես Թամարն իմ աչազեղ, ե՛ս եմ տղան սիրակեզ,-

Երբ իմ երգի լեզուն դառած՝ տղան Թամար հառաչե,

Այդ իմ սերն է երգի փոխված, որ ահա քեզ կկանչե.

Ա՛խ, այդ ես եմ վշտով վսեմ նրանից խոր կարոտած՝

Քեզ համար եմ այս երգն հյուսում՝ ուշք ու միտքս քեզ տված.

Քո անունն է Թամար դառել հուր շուրթերին Շոթայի,

Թագուհին ես դու էլ իմ չար՝

անունդ ինչպե՛ս ես տալի,

Զե՛ որ ասի՛ր՝ «Կզրկվես ժպիտներից իմ քնքուշ՝

Թե իմանա, ա՛խ, իմացի՛ր՝ գաղտնի սերն է միշտ անուշ...»:

Գիտեմ, ի՛մ քույր, չե՛ որ արդեն բարուր ունես քո գրկին,

Ու ես պիտի ծուխս պահեմ՝ դեռ շամփրված կրակին,-

Յեռվից հեռու պիտի սիրեմ՝ մինչեւ իջնեմ գերեզման,

Յեռվից հեռու, որ չկտրեմ սյունը քո տան սրբազան...

Ու վա՛յ նրան, ով ուրիշի տունն է քանդում իր սիրով,

Ով ուրիշի վշտի վրա կանգնում է տունն իր խռով:

(Էջ 282-283, ընդգծ.՝ մերն են - Ս. Մ.)

Պոեմից քաղվածքները գիտակցաբար բերում ենք վերջին հրատարակությունից, որպեսզի հասկանալի լինեն մինչեւ կյան-



քի վերջին օրերը տեսած «գաղտնի եւ անուշ սիրո» գեղեցկությունն ու բարոյական մաքրությունը: Երկերի երրորդ հատորը, որում տպված է այս պոեմը, շարվածքի է հանձնվել բանաստեղծի ճակատագրական եւ մահացու հիվանդությունից ընդամենը մեկ օր հետո՝ 1984 թ. մարտի 10-ին, իսկ գիրքն այս անգամ բարեբախտաբար մինչ այդ կազմվել ու խմբագրվել էր բանաստեղծի համաձայնությամբ:

Վերելի մեջբերման մեջ ընդգծված տողերից երեւում են ճշմարիտ սիրո մաքրությունն ու վեհությունը: Բանաստեղծը երգը հյուսել է արդեն ուրիշ բույն հյուսած իր սիրածի համար, սիրել է «հեռվից հեռու», որովհետեւ չի կամեցել կտրել նրա սրբազան սիրո տան սյունը, իր «հանցավոր» սիրով «քանդել նրա տունը» եւ այդպես, առանց սիրածի անունը տալու, գաղտնի սիրելու է նրան՝ «մինչեւ իջնի գերեզման»:

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ էջ 4

Քանզի գրեալ է ի վեցերորդ գլուխ կանոնացն այսպես եթէ կարգեցին առաքեալն եւ եղին հաստատութեամբ, թէ եղիցի տաւն Ծննդեան եւ Յայտնութեան Տեառն եւ Փրկչին մերոյ գլուխ եւ առաջնորդ տաւնից եկեղեցւոյ, որ աւր ԻԱ Է Տիբեթ ամսոյ, որ Է 2 յունուարի ըստ հռոմայեցոց»: Շիրակացին նշում է, որ դրանից շատ հետո, ինչպես ոմանք են ասում, Կերինթոսի (Կերինթոսը համարվում է առաքյալների ժամանակ ապրող անձնավորություն) աղանդավոր աշակերտներն այս երկու տոներն առանձնացրին, որն ընդունեցին հույները, եւ նրանց միջոցով էլ այդ կարգը տարածվեց: Կոստանդինոսի ժամանակ՝ Նիկիայի ժողովում, սակայն, այդ բաժանումը եկեղեցու սուրբ հայրերի կողմից ընդունելություն չգտավ. նրանք որոշեցին տոնել ըստ սուրբ առաքյալների սահմանած կանոնների: Նա հիշատակում է Մակար Երուսաղեմացու՝ այդ առիթով Յայաստան ուղարկած խրատական թուղթը, ուր Մակարը հաստատում է, որ Մկրտությունը պետք է տոնել Ծննդյան հետ նույն օրը: Մակար հայրապետը 325 թվականի Նիկիայի ժողովին մասնակցած հայրապետներից մեկն էր, ով Շիրակացու մեջբերած հատվածում խոսում է նաեւ մկրտվելով մաքրության մասին. Զրիստոս հանձն առավ մկրտվել նույն օրը՝ մեր մեղքերը վերացնելու համար: Աստծո Որդին կարիք չունեւ մկրտվելու, բայց նա կամեցավ մաքրել մեզ մեղքերի ախտից: Զետաքրքիր է նաեւ այն հատվածը, ըստ որի՝ մկրտվողին 3 անգամ սուրբ ավագանի մեջ ընկղմելով՝ պետք է օրինակ լինենք Տիրոջ երեքօրյա թաղման: Մակար հայրապետը ներկայացնում է նաեւ առաքյալի՝ Զոմենացիներին ուղղված թղթի համապատասխան համարը (Զոմ. 2 4): Գեղեցիկ եւ նուրբ մեկնաբանությամբ Ծննդյան եւ Մկրտության խորհուրդը կապվում է Զորության եւ Պենտեկոստեի խորհրդի հետ:

Շիրակացին գրում է, որ Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետը սահմանել է

ՍԲ ԾՆՆՈՒՅԱՆ ԵՒ ՆԱՅԱՏՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՈՐ՝ ԸՍՏ ԱՆԱՆԻՎԱ ԾԻՐԱԿԱՑՈՒ ՃԱՌԻ

Սուրբ Զայտնության տոնը կատարել հունվար ամսի վեցին. «....զկանոն ծննդեան ի վեց յունուարի կարգեաց նոյն ինքն Կիրեղ. Քանզի գրեալ է ի սկզբան կանոնին այսպես, թէ տաւն սրբոյ Յայտնութեան կատարի ի յունուարի որ [աւր] վեց է ամսոյն ժողովին ի Զովուանոցն. Եւ զայս ինչ կանոն կատարին եւ ապա ի Բեթղեհեմ եւ ի Յայրին»: Կյուրեղ Երուսաղեմացու ժամանակ դեկտեմբերի 25-ը Դավթի եւ Զակոբի տոնն էր, երբ այլ քաղաքներում Զիսուս Զրիստոսի Ծնունդն էին նշում. «....Եւ յայտ է ի կանոնադրութիւնն ընթերցուածոցն սրբոյ Կիրեղի, քանզի այսպես, եթէ ԻԵ [աւուր] ամսոյն դեկտեմբերի է տաւն Դաւթի եւ Յակոբու գոր յայդ քաղաքս ծնունդ Զրիստոսի առնեն...»:

Զամաձայն Զին Կտակարանի՝ որեւէ մեկն իրավունք չունեւ քահանայություն անելու, եթէ չէր լրացել իր երեսուն տարին: Շիրակացին վկայակոչում է Դուկասի Ավետարանը. «Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ» (Դուկ. Գ 23): Ինչն էլ ցույց է տալիս, որ նույն՝ ծննդյան օրն էլ մկրտվել է եւ 30-ամյա կատարյալ հասակով սկիզբ դրել քարոզչությանը: Նրա մկրտության ժամանակ բացահայտ երեւաց Աստվածությունը, քանզի ձայնը երկնքից վկայեց. «Դա՛ է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» (Մատթ. Գ 17):

Անդրադառնալով հույների այն ասածին, թէ առաքյալները ժամանակ չունեին ստուգապես քննելու տոնական օրերը, քանի որ նրանց գործը ավետարանելն էր եւ հեթանոսական տոներից զատելը, Շիրակացին հակադարձում է, որ առաքյալ-



ները եթէ մեզ սովորեցրել են արեւելք դառնալով աղոթել, տոնել կիրակին, պատվել եւ գործ չանել, պահել չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, չէին կարող անփույթ գտնվել տոների կարգավորման նկատմամբ: Նաեւ նշում է, որ եկեղեցու նշանավոր հայրերից Բարսեղը եւ Գրիգոր Նազիանզացին, որոնցով պարծենում են նաեւ հույները, եթէ այդ մասին ուրեւ խոսք ունենային, ինքն անապաման կլեր եւ կընդունե՛ր՝ համաձայն Ավետարանի խոսքի. «Եթէ երկրորդը հայտնվի, առաջինը պետք է, որ լռի» (Եբր. Ժ 9): Բայց նրանք տոնի մասին նման խոսք չունեն: Եվ նշում, որ քանի որ երկու տոնի մասին էլ վկայություն կա Կյուրեղի

ները եթէ մեզ սովորեցրել են արեւելք դառնալով աղոթել, տոնել կիրակին, պատվել եւ գործ չանել, պահել չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, չէին կարող անփույթ գտնվել տոների կարգավորման նկատմամբ: Նաեւ նշում է, որ եկեղեցու նշանավոր հայրերից Բարսեղը եւ Գրիգոր Նազիանզացին, որոնցով պարծենում են նաեւ հույները, եթէ այդ մասին ուրեւ խոսք ունենային, ինքն անապաման կլեր եւ կընդունե՛ր՝ համաձայն Ավետարանի խոսքի. «Եթէ երկրորդը հայտնվի, առաջինը պետք է, որ լռի» (Եբր. Ժ 9): Բայց նրանք տոնի մասին նման խոսք չունեն: Եվ նշում, որ քանի որ երկու տոնի մասին էլ վկայություն կա Կյուրեղի

Շարունակությունը՝ էջ 6

Սկզբը՝ թիվ 22-24

Պատմությունը «Աշխարհագրության» Ասիայի 3-րդ քարտեզի նկարագրության մեջ ներկայացնում է Մեծ Հայքի թագավորության սահմանները, շուրջ 120 աշխարհագրական օբյեկտ, այդ թվում՝ 20 աշխարհի եւ 84 բնակավայր: Մինչ Բ. Հարությունյանի կատարած ուսումնասիրությունները, հետազոտողների համոզումներում գերիշխում էր այն տեսակետը, թե Պատմությունը Մեծ Հայքի աշխարհները թվարկում է անկանոն կերպով՝ առանց որևէ օրինաչափության կամ շեշտված հերթականության: Բ. Հարությունյանի կարծիքով՝ երկն իրականում տալիս է Մեծ Հայքի աշխարհների թվարկման որոշակի մեխանիզմ, որը հետագայում մեծավ մասամբ գործում է նաեւ «Աշխարհացոյցի» պարագայում (թեեւ կան որոշ առանձնահատկություններ, օրինակ՝ «Աշխարհացոյցում» աշխարհների թվարկումը, ի տարբերություն Պատմության, եզրափակվում է Այրարատով): Աշխարհները Պատմությունը թվարկում է 4 շարքով՝ հյուսիս-արեւմուտքից սկսելով եւ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ շարժվելով: Հենց այս տրամաբանությունն էլ օգնում է ուսումնասիրողին շտկել Մեծ Հայքի պատմության քարտեզի վերակազմությունը:

Փաստորեն՝ Պատմության երկու ներկայացված է աշխարհների նկարագրման հերթականության որոշակի տրամաբանություն, որին հետագայում հետեւել է հայ աշխարհագրական միտքը: Այս կարծիքին է, օրինակ, Ա. Սուքրյան (Ա. Սուքրյան), ով «Աշխարհացոյցի» ընդարձակ խմբագրության հրատարակության նախաբանում նշում է, թե «Աշխարհացոյցի» հեղինակը երկի շարադրման հաջորդականության մեջ քայլ առ քայլ հետեւել է Պատմության: Ս. Երեմյանը հակված է կարծելու, որ «Աշխարհացոյցի» եւ Պատմության «Աշխարհագրության» միջեւ նույնիսկ եղել է «անմիջական կապ», այսինքն՝ «Աշխարհացոյցի» հեղինակը ոչ թե պարզապես միջնորդավորված ձեռով է ծանոթացել Պատմության աշխատանքին (Պապոս Ալեքսանդրացու «Քորոգրաֆիա» երկի միջոցով), այլ իր ձեռքի տակ է ունեցել Պատմության թե՛ երկը, թե՛ քարտեզները: Թ. Հակոբյանը, հակառակ Ս. Երեմյանի կարծիքի, գտնում է, որ երկի շարադրման օրինաչափությունները բխում են լոկ նրանից, որ Պապոս Ալեքսանդրացին օգտվել է Պատմությանից, իսկ «Աշխարհացոյցի» հեղինակը՝ Պապոսից, սակայն «Աշխարհացոյցի» հեղինակն անմիջականորեն ծանոթ չի եղել Պատմության գործին: Նույն կարծիքին է Մ. Խաչատրյանը, ով ներկայացնում է, թե Պատմությունը նախ քարտեզներն է կազմել, ապա տվել նկարագրությունը, ինչը չի ներկայացնում «Աշխարհացոյցի» տրամաբանությունը:

Բ. Հարությունյանն իրավացիորեն նկատում է, որ հնարավոր չէ հաստատապես պնդել՝ «Աշխարհացոյցի» հեղինակն օգտվել է «Աշխարհագրությունից», թե՛ ոչ,

Մեծ Հայքի Կապուխոս Պատմության «Աշխարհագրություն» երկում



Պատմություն (ուսմիջնադարյան դիմանկար)

սակայն պետք է նկատել աշխարհների նկարագրության համակարգի տրամաբանության որոշակի նմանությունը երկու երկերի միջեւ: Ըստ Նրա՝ Դիոկղետիանոս կայսեր (284-305 թթ.) օրոք ստեղծագործած Պապոս Ալեքսանդրացու համառոտագրել է Պատմության «Աշխարհագրությունը»՝ վերածելով այն երկրագրության, եւ քանի որ «Աշխարհացոյցի» հեղինակն անվերապահորեն օգտվել է Պապոս Ալեքսանդրացու աշխատանքից, ուստի Պատմության «Աշխարհագրության» շատ իրողություններ բառացի տեղ են գտել «Աշխարհացոյցում»: Ը. Պատկանյանի իր հրատարակության մեջ նույնիսկ բառացիորեն նշում է, որ Պապոս Ալեքսանդրացին նկարագրել է երկիրը՝ ըստ Պատմության տիեզերագիտական չափումների:

«Աշխարհացոյցում» Պապոս Ալեքսանդրացուց եւ Պատմությանից կատարված մեջբերումների առատությունը, ինչպես նշում է Ս. Երեմյանը, շփոթության մեջ է գցել որոշ ուսումնասիրողների (Ա. Սուքրյան, Յ. Ֆիշեր)՝ հիմք տալով նրանց ենթադրելու, թե իբր «Աշխարհացոյցը» Պատմության երկի մի ընդօրինակություն է: Այս տեսակետը մերժվում է նրանով, որ «Աշխարհագրության» եւ «Աշխարհացոյցի» փաստական տեղեկությունները մեծ մասամբ համընկնում են միայն Եվրոպայի եւ Աֆրիկայի պարագայում, եւ անգամ՝ Հարավարեւելյան Եվրոպայից սկսվում է «Աշխարհացոյցի» որոշակի ինքնուրույնությունը:

Միանգամայն առանձնահատուկ եւ ինքնուրույն են ստացվել «Աշխարհացոյցի» Ասիային, մասնավորապես, Մեծ Հայքին, Վիրքին, Աղվանքին, Ասիական Սարմատիային եւ Սասանյան Իրանին նվիրված հատվածները, որտեղ հեղինակն առանձնապես չի հետեւում Պատմության աստիճանացանցին՝ ներկայացնելով իրական, այլ ոչ թե հաշվարկային տվյալներ:

Առաջ քաշելով եւ հիմնավորելով այն տեսակետը, թե «Աշխարհացոյցում» արտացոլված է 3-րդ դ. կեսերի դրությամբ Մեծ Հայքի վարչաքաղաքական համակարգը՝ Բ. Հարությունյանը գտնում է, որ, եթե մեզ չհասներ Պատմության «Աշխարհագրություն» երկը, ապա գուցե «Աշխարհացոյցն» ընկալվեր որպես 7-րդ դ. իրողություններն արտացոլող աշխատանք: Միեւնույն ժամանակ եթե մեզ չհասներ «Աշխարհացոյցը», ապա միանգամայն անընկալելի կլինեին պատմության նկարագրության վարչաքաղաքական իրողությունները:

Հարկ է նշել այն հանգամանքը, որ 15-18-դդ. եվրոպացի բազմաթիվ քարտեզագիրներ պատկերել են աշխարհի պտղո-

վերակազմությունները կատարվել են՝ հիմքում ունենալով աշխարհագրական չճշգրտված կոորդինատներ:


Բ. Հարությունյանը գտնում է, որ «Աշխարհացոյցի» հեղինակը հետեւել է Պատմության եւ նրան համառոտագրող Պապոս Ալեքսանդրացու օրինակին՝ Մեծ Հայքի նկարագրությունը տալով արեւմուտքից արեւելք ուղղությամբ, այն էլ՝ սկսելով Բարձր Հայքից: Միաժամանակ նա գտնում է, որ Բարձր Հայքի նկարագրությունից սկսելը կարող է բխել նրանից, որ այս երկրամասը դիտարկվել է որպես հայոց պետականության սրբազան բնօրրան: Պատահական չէ, որ այստեղ էր գտնվում հայ իշխանության դիցարանի գլխավոր աստվածների մեխանիզմի մեծագույն մասը, այստեղ էին ամփոփվում հայ Արշակունի արքաներն ու քրմապետները, այնուհետեւ՝ նաեւ կաթողիկոսները: Մեր կարծիքով՝ անգամ Պատմություն իր թվարկումը կատարելիս ոչ թե առաջնորդվել է այն մտայնությամբ, թե սկսի թվարկումը Հռոմեական կայսրության սահմաններին առավել մոտ երկրամասերից, այլ ավամայից հետեւել է Հայոց պետականության ներսում եղած վարչաքաղաքական ավանդույթներին: Հակառակ պարագայում ինչո՞ւ է նա Շոփը հիշատակում Նահանգների ոչ թե առաջին, այլ վերջին շարքում:

Ըստ Բ. Հարությունյանի՝ Մեծ Հայքի 20 աշխարհները որոշակի քաղաքական տրամաբանությամբ եւ աշխարհագրական տեղադրությամբ՝ Պատմության կողմից դասակարգվել են 4 խմբերի.

1. Կատարգեն, Տոսարեն, Օտենե, Կոլթեն, Սոդուկեն, Սիրակեն, Սակասեն,
2. Բասիլիսեն, Բոլթեն, Արսեսա, Ակիլիսեն, Աստաունիտիս, Սոփեն,
3. Անգիտեն, Թոսպիտիս, Կորինայա,
4. Բագրավանդեն, Գորդուեն, Կոտայա, Մարդեր:

Պատմությունը Մեծ Հայքի աշխարհների **առաջին շարքը** ներկայացնում է հետեւյալ կերպ. «Մեծ Հայքի՝ Եփրատ, Կյուրոս եւ Արաքս գետերի միջեւ ընկած հատվածի գավառներն են. Մոսքական լեռների մոտ՝ Կատարգեն՝ Բոլթեր կոչեցյալներից վերեւ, Կյուրոս գետի մոտ՝ Տոսարեն եւ Օտենե, Արաքս գետի մոտ՝ Կոլթեն, իսկ նրանից ներքեւ՝ Սոդուկեն, Պարիադես լեռան մոտ՝ Սիրակեն եւ Սակասեն»:

Հարունակելի
Միջայել ՄԱՆԱՍՍԱՆ



Ասիայի Բարձր դոս Պատմության (դոս Յոհաննես Շոփերի 1482 թ. հրատարակությամբ)

մեության քարտեզը՝ նրանում ուրույն տեղ հատկացնելով Ասիայի 3-րդ քարտեզին («Asiae Tabula Tertia»), որտեղ առկա է Մեծ Հայքի, Կողքիսի, Իբերիայի եւ Աղվանքի նկարագրությունը: Բանն այն է, որ Մեծ Հայքում գտնվող Արարատ լեռը դիտվում էր որպես Նոյի տապանի հանգրվանատեղի, ուստի երիտասարդ եվրոպացիների համար կարեւոր էր դառնում աստվածաշնչյան երկրի պատկերումը: Ըստ Ս. Երեմյանի՝ այդ ժամանակաշրջանի՝ պտղոմեոսյան քարտեզի բազմաթիվ

Մեծ Ծննդյան եւ Նայտնության տոնը՝ ըստ Անանիա Շիրակացու ճառի

Սկզբը՝ էջ 5

Շիրակացին, մանրամասն քննելով Հին Ուխտը, ապա՝ Ավետարանը, ցույց է տալիս, որ անպատշաճ էր, որ Չաքարիան այդ օրը մերձենար իր կնոջը, քանի որ նա այդ տարվա քահանայապետն էր, ով ըստ հրեական օրենքի՝ տարեկան մեկ անգամ էր մտնում Սրբություն Սրբոցը: Դա վկայում է Պողոս առաքյալը (Եբր. Թ 7): Այդ օրը՝ Թշրին 10-ը (սեպտեմբերի 27-ը), քաղության օրն էր՝ Հին Կտակարանում նշված 7-րդ ամսվա 10-րդ օրը (Ղեւտ. ԺԶ 29-31, ԻԳ 26-32), եւ Չաքարիան չէր կարող տուն գնալ: Եթե նույնիսկ ժողովրդին էր պատվիրված սրբազործվել, ինչպես կարող էր Չաքարիան թողնել եւ գնալ. «...ապա զհարդ ի

մեջ երկուց գլխաւոր տաւնիցն քահանայապետն թողոյր գծողովորդն. Եւ ի տուն երթալ մերձենայր ի կնիւն. Եւ կամ ի նոյն աւուր տաւնիւն...»: Տաղավարահարաց մեծ տոնն առջեւում էր, որչ Իսրայելն այնտեղ հավաքված էր, որպեսզի 7 օր տոնի Տաղավարահարաց տոնը: Այս մասին է ասում նաեւ Ղուկաս ավետարանիչը. «Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, գնա՛ց ի տուն իւր: Եւ յետ աւուրքն այնոցիկ յղացա՛ւ Եղիսաբեթ կինն նորա» (Ղուկ. Ա 23-24): Շիրակացին ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ավետարանիչը երկու անգամ է նշում այդ օրերի հատվածը. «Իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, գնա՛ց ի տուն...», եւ դարձյալ՝

«յետ աւուրքն այնոցիկ»: Հետեւաբար Չաքարիան տոնական օրերից հետո է մերձեցել կնոջը: Նրա պապանձումը եղել է Թշրին 10-ին, այսինքն՝ սեպտեմբերի 27-ին, իսկ Թշրին ամսի 29-ին՝ հոկտեմբերի 9-ին՝ Եղիսաբեթի հղիությունը: Վեց ամիսը հաշվելով 180 օր՝ հասնում է Նիսան 16-ին, որը համապատասխանում է հռոմեական ապրիլի 6-ին, երբ եղել է սուրբ Կոյսի ավետումը: Ապա հաշվելով անդրանկաձեռության ժամանակը՝ Շիրակացին հաստատում է հունվարի 6 ամսաթիվը:

Շիրակացին նաեւ ներկայացնում է՝ 8 ազգերի տոմարներով երբ է լինում Հայտնության տոնը, եւ 9-րդը նշում հայոցը, որ փոփոխվում է 4 տարին մեկ:

Այսպիսով՝ Անանիա Շիրակացին «Յայտնութեան» ճառում պաշտպանում է եւ հաստատում Հայոց Եկեղեցու՝ Զրիստոսի Ծննդյան ու Հայտնության տոնը միասնաբար հունվարի 6-ին կատարելու տեսակետը եւ քննադատում, համոզիչ փաստարկներով հակադրված քաղկեդոնական հույների եւ այլոց տեսակետը, համաձայն որի՝ Զրիստոսի Ծնունդը կատարում էին դեկտեմբերի 25-ին, իսկ Հայտնությունը՝ հունվարի 6-ին:

Եվ, ի վերջո, այս հաշվարկները մի կողմ թողնելով՝ հիշենք. «Եթե բոլորս ապրինք Զրիստոսի ծննդեան խաղաղաբեր պատգամին հնազանդութեան մեջ, ուրիշ չի կրնալ ըլլալ մեր ճամփան, քան այն, որ կը տանի դէպի խաղաղութիւն, հաճութիւն...» (Գարեգին Ա): Փրկիչն Իր հոգու խաղաղությունը բերեց աշխարհին եւ սիրով ու խաղաղությամբ մարդկանց մեջ սերմանեց սիրո, արդարության սերմերը:

Պատրաստեց
Աստղիկ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ



Սկիզբը՝ թիվ 22-24

Գավառում ջարդերն սկսվեցին 1915 թ. մայիսի 1-ին: Զրոյական Յամիդիե հեծելազորների եւ քրդական հրոսակախմբերի հարձակման առաջին թիրախները դարձան Գովանդունկ (Կովնդունկ), Սալվորի (Սարվոլի) եւ Խրըմխայա (Կրըմկայա) գյուղերը:

Գովանդունկի, Սալվորի եւ Խրըմխայա գյուղերի ինքնադաժնուկացիների մահերը

1915 թ. մայիսի 1-ին Գովանդունկ գյուղ ներխուժեցին քրդական հեծյալ ջոկատն ու քրդական շրջակա գյուղերի խուժանը: Գյուղը բաղկացած էր 120 տուն հայ բնակիչներից: Զրոյական համադեական հեծյալներն սկզբում իբրեւ հյուրեր իջեանեցին գյուղի հայկական տներում, ապա հանկարծակիի բերելով բնակչությանը՝ սկսեցին ջարդն ու թալանը: Նույն պահին նրանց միացավ մերձակայքում գտնվող քրդական խուժանը: Այս ամենը տեսնելով՝ հայ գյուղացիների զինված խումբը, փորձառու հայրուկների՝ դաշնակցականներ Միերի Դավթի, Յամազասպ Մալխասյանի եւ ինչպե՛ս Ալեքսանդրի գլխավորությամբ, գյուղում դիրքեր բռնելով՝ օրհասական կռիվ մղեց թշնամու դեմ՝ ստիպելով նրան փախուստի դիմել: Թշնամու նահանջից օգտվելով՝ զինյալ փոքր մի խմբի պաշտպանությամբ գյուղի անգնե բնակչությունը կարողացավ փախչել հարեան Գարաշոբան գյուղավանդ, որը Խնուս բերդաքաղաքից հետո գավառի ամենախոշոր

բնակավայրն էր. այստեղ էր նստում Նահիթի (գյուղախմբի կենտրոնի) մյուրդիրը՝ նրա պաշտպանությունը հոգալու:

Նահանջող թշնամին նկատելով, որ գյուղը դատարկվել է, վերադարձավ եւ վճռական հարձակում ձեռնարկեց, որի արդյունքում գրավեց գյուղի մի մասը: Սակայն հայ մարտիկների խումբը կռիվը շարունակեց մինչեւ ուշ երեկո՝ մթի պայմաններում հնարավորություն ընձեռելով բնակչության մի մասին իրենց հետ բարձրանալու Գոզալ Պապա լեռը: Այստեղից էլ նրանց միացած բազում հայրենակիցների հետ որոշեցին անցնել ռազմաճակատի ռուսական զիծը: Նույնը կրկնվեց նաեւ Սալվորի փոքրիկ գյուղում, որը բաղկացած էր 30 տուն հայերից: Նույն օրը Յամի բեյի քրդական համադեական հեծելազունը, քրդական խուժանի հետ, հարձակվեց Սալվորի հայկական գյուղի վրա: Այստեղ եւս մի խումբ հայ ինքնապաշտպաններ՝ գյուղացիներից բաղկացած զինյալ խումբը, հերոսաբար կռվելով, լուրջ դիմադրություն ցույց տվեց թշնամուն՝ դիմագրավելով հակառակորդին այնքան ժամանակ, մինչեւ որ անգնե բնակչությունը կարողացավ հեռանալ Գարաշոբան: Միայն դրանից հետո նրանք նահանջեցին, իսկ գյուղը ենթարկվեց թալանի:

Մայիսի 2-ին նույն բախտին արժանացավ Խրըմխայա (Խրըմխայա) գյուղը, որը բաղկացած էր 45 տուն հայ եւ 5 տուն քրդերից: Գյուղը ենթարկվեց վերոնշյալ Յամի բեյի համադեական հեծելազորի հար-

Խնուս

ձակման: Անգնե ժողովուրդը հանկարծակի գալով՝ փախուստի դիմեց, մինչեւ գյուղացիներից կազմված զինված խումբը, կռվելով թշնամու դեմ, ապահովվեց Գարաշոբան տանող ճորանցքի ճանապարհի անվտանգությունը, որն էլ հնարավորություն տվեց փախչող ժողովրդին ապաստանել Գարաշոբանում: Գյուղում մնացողները ենթարկվեցին կոտորածի, իսկ գույքն ու ունեցվածքը թալանվեց: Չինված խումբը բարձրացավ Գոզալ Պապա լեռը՝ միանալով այնտեղ հավաքված խմբին:

Գարաշոբանի (Կարաշոբան, Խարաշոբան) եւ Գոդալի (Կոբալ, Գոբալյան) ինքնադաժնուկացիների մահերը

Առավել ծանր դիմադրական մարտեր տեղի ունեցան Գարաշոբանում, որը Խնուս գավառի հայաբնակ գյուղերից ամենամեծն էր, ուներ 220 տուն հայեր, բազմամարդ էր եւ գտնվում էր նյութական նախանձելի վիճակում: Երիտթուրքական իշխանությունները, հաշվի առնելով այստեղ ապաստանած հայերի թիվը եւ հնարավոր ուժեղ դիմադրությունը, կենտրոնացնում են մեծ բանակությամբ ուժեր: 1915 թ. մայիսի 2-ին Գարաշոբանի մյուրդիրն այստեղ հրավիրեց Օսման չաուշի գլխավորած մի դասակ՝ ժանդարմներով ու հեռագրատան պաշտոնյաներով, ինչպես նաեւ քուրդ ցեղապետների առաջնորդներ Մոռոյի եւ Սեւտինի ղեկավարած չեթեններին՝ իրականացնելով Գարաշոբանի հայության կոտորածի եւ թալանի ծրագիրը: Շրջակա հայ գյուղերի դեպքերը պատրվակ բռնելով՝ մյուրդիրն իր մոտ հրավիրեց նաեւ Յագրոյի տղաներին՝ Խարայեյին, որը գյուղի մյուրդիրն էր եղել, Գասպարին, Կիրակոսին ու Չաքարյան Եղիշեին եւ առաջարկեց պաշտպանել նրանց՝ ակնկալելով տիրանալ մեծաքանակ գումարի:

Եղիշե Չաքարյանին հաջողվեց մյուրդիրի մոտից ճարպկորեն դուրս գալ եւ փախչելով միանալ Տերտերոշ Սիմոնի ղեկավարությամբ զինված ու կռվին պատրաստ

խմբին, որի մեջ էին նաեւ հայտնի կռվողներ Յամազասպը, Շապուհը, Բուդաղի Տիգրանը եւ ուրիշներ: Մյուրդիրն առաջարկեց Խարայեյին խոսել ու համոզել հայերին զինաթափ լինել եւ հանձնվել իր պաշտպանությանը, ինչպես Խարայեյը՝ իր ընտանիքի հետ: Դիմադրության փորձերի դեպքում սպառնում էր բնաջնջել հայ բնակչությանը՝ օրինակ բերելով այն գյուղը, որտեղ փորձել են դիմադրել: Մի կողմից՝ նա համոզում էր հայերին զինաթափ լինել, մյուս կողմից՝ գաղտնի հրահանգում էր քրդական համադեական հեծելազորին պաշարել գյուղը:

Մայիսի 2-ի կեսօրին քրդական հեծելազունը ու խուժանը հարձակվեցին Գարաշոբանի վրա: Առաջին գրոհը հայերը հետ մղեցին՝ թշնամուն պատճառելով ծանր կորուստներ: Կորցնելով 59 հոգի՝ թշնամին նահանջում է: Մյուրդիրը եւ Օսման չաուշը, տեսնելով քրդերի պարտությունը եւ գետնին փռված դիակները, խիստ զայրանալով՝ տեղն ու տեղը սպանեցին Յագրո Խարայեյին ու նրա եղբայրներին, ինչպես նաեւ նրանց մոտ ապաստանած բոլոր անգնե հայերին, եւ Մոռոյին ու Սեւտինին նորից հրահանգեցին կոտորել բոլոր հայերին:

Թշնամու նոր հարձակումով կռիվը վերսկսվեց: Սակայն հայերին հաջողվեց հետ մղել թշնամու բոլոր գրոհները եւ ապահովել անգնե բնակչության անցումը Գոզալ Պապա լեռը: «Թշնամին, միշտ զինքը հալածելով, կը հետեւի իրենց: Սակայն, զինելա խումբը, միշտ կռուելով, հերոսական ճիգերով՝ կարգիլ է թշնամիին հասնելու անգնե ժողովուրդին», գրում է Եղիշե Մելիքյանը: Միայն Սիմոն Տեր-Յովհաննիսյանը՝ իր 25 հոգանոց խմբով, սպանեց 25-ից ավելի քրդերի եւ թշնամուց խլեց 5 հրացան: Նրա խմբից 18 հոգի բաժանվելով անցան Գոզալ-Բարա գյուղը, որտեղ շրջապատվեցին քրդերի կողմից: Այստեղ 3 օրվա ինքնապաշտպանության արդյունքում նրանց հաջողվեց 2 քրդերի սպանելով՝ անվնաս հասնել Մանազկերտ եւ միանալ ռուսական բանակին: Այսպիսով՝ թուրքական եւ քրդական երկրորդ գրոհը նույնպես հետ մղվեց:

Շարունակությունը՝ էջ 8

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՁ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 5

Ժողովրդի բանաստեղծն այսօրվա թովհիկների նման չէր կարող դուրս գալ ազգային ավանդական բարոյական ըմբռնումների սահմաններից ու միայն ցոփ մարմնավայելքը կամ գուտ սեռական գործողություններ տարփողելն անվանել սեր: Պոեմը, իհարկե, գրվել վաղ՝ հենց բանաստեղծի եւ Իդայի բուն սիրո եւ բախումների շրջանում եւ առաջին անգամ «Շոթան եւ Թամարը» վերնագրով հրատարակվել է 1954 թ., հետո լրամշակվելով՝ 1961-ին «Սիրանամե» խորագրով լույս է տեսել առանձին գրքով:

Պոեմի թռուցիկ քննությունը մեզ չի շեղի բուն կյանքից, մանավանդ որ նրա ենթախորագիրն է «Սիրո փիլիսոփայությունը»: Սա հեղինակի՝ իր երկին տված բովանդակային-ժանրային բնութագիրն է:

Նախ՝ պատմական հիմքի մասին:

Բանաստեղծը սիրո փիլիսոփայությունը ներկայացրել է հայոց եւ վրաց պատմության 12-րդ դարի, իսկ ավելի ստույգ՝ Յայ-վրացական միացյալ թագավորության ժամանակների դեպքերի եւ դեմքերի գեղարվեստականացումով: Գործողությունների կենտրոնում՝ որպես ժամանակի քաղաքական հզորագույն դեմք, վրաց Թամար թագուհին է՝ վրաց մեծագույն բանաստեղծ Շոթա Ռուսթավելու հետ ունեցած սիրո պատմության նպատակային պատկերումով:

Պատմագիր-ժամանակագիրները, բնականաբար, տեղեկություններ են թողել առավելապես Թամար թագուհու եւ նրա հավատարիմ հայ զինակիցների՝ Սարգիս Չաքարյան Մեծի որդիներ Իվանե աթաբեկի ու Չաքարե ամիրսպասալարի տիրապետության շրջանի մասին:

Այս հիմքի վրա էլ հյուսվել է քնարաեպիկական մի շքեղ վիպասը, որը նաեւ 12-րդ



Գործ՝ Ալ. Գրիգորյանի

դարում սելջուկ-թուրքերի ու ողջ Իրան-Թուրանի նվաճողական հարձակումների դեմ հայ-վրացական հաղթական զինակցության մի հրաշալի գովերգ է:

Իսկ որքանո՞վ է դա արդիական, ինչպե՞ս է այն ընկալվել խորհրդային ժամանակներում եւ ի՞նչ արժեք ունի հիմա՝ մեր օրերում:

Այս հարցերի պատասխանի որոնումներում կողմնորոշիչ կարող է լինել Ֆիրդուսուց վերցված բնաբանը՝

Բա՛ց հին-հին դարերի գաղտնիքը դու ինձ ե՛վ հուզիր իմ քնած հանճարը նորից:

Իսկ «հին-հին դարերի գաղտնիքների» բացահայտումն իրոք անհրաժեշտություն էր նորագույն ժամանակներում, թեեւ բա-

նաստեղծի ողջության օրոք եւ նրանից հետո էլ պոեմը չի արժանացել գրականագիտական բնութագրման:

Բնավ պատահական չէ, որ պոեմը հյուսված է Շոթա Ռուսթավելու «Վագրեսավորի», Արեւելքի մեծ բանաստեղծներ Ֆիրդուսու «Շահնամեի», նրա ազգակից Նիզամու «Լեյլի եւ Մեջնունի» եւ իր իսկ՝ Շիրազի կողմից արդեն կիրառված՝ «Սիամանթո եւ Խեզդարե» պոեմների տաղաչափական համակարգով, Էպիկականի եւ քնարականի համաչափ զուգորդումներով, արեւելյան ու կովկասյան ավանդաբանությունների տեղին ներհյուսումներով եւ նրանց պատմումի արվեստի հետ ունեցած ոճական որոշակի ընդհանրություններով:

Սակայն, այս ամենով հանդերձ, «Մուտքից», «Նախերգանքից», «Վերջերգից» եւ ուրիշ գլխից հյուսված պոեմում ցայտուն է հեղինակի ինքնատիպությունը, որ հիմնված է դիպաշարի կառուցման վարպետության, մտքի զարմանալի թռիչքներով ուղեկցվող գեղարվեստական անակնկալ գյուտերի, շիրազյան բանարվեստին բնորոշ անկրկնելի պատկերավորության ու աֆորիզմի արժեք ունեցող թեւավոր խոսքերի եւ փիլիսոփայական խտացումների առատության վրա: Այս հիմունքով էլ նա իր պոեմը բնորոշել է «Սիրո փիլիսոփայությունը» ենթախորագրով:


Սկսած «Մուտքից» ու «Նախերգանքից»՝ պոեմի բոլոր բաժիններում հաճախ են հանդիպում Յայաստանը խորհրդանշող Արաքս եւ Վրաստանը խորհրդանշող Քուռ գետերը, որոնց գրկախառնումն ընկալվում է որպես անհիշելի ժամանակներից ի վեր հայերի ու վրացիների անքակտելի բարեկամության առնավատչյա: Այս փոխանություններում հայ բանաստեղծը հայոց ու վրաց մայր գետերն անձնավորում է եւ Վրաստանի մասին խոսում կարոտած հա-

րազատի իրավունքով, որին արժեւորում է որպես ամենաթանկ մտերմի:

Պարզի՛ր, Արա՛քս, համբույրս տար ջինջ ջրվեժով քո բյուրեղ, Իմ աչագեղ Յայաստանից Վրաստանիս աչագեղ:

Պատմական դարաշրջանի մթնոլորտի եւ միջավայրի բնորոշ պատկեր ստեղծելով՝ բանաստեղծն ասպարեզ է բերել պոեմի գործող հերոսներին՝ Թամարին ու ռուսթավելցի պատանի գուսան Շոթային, Չաքարյան եղբայրներ Իվանե աթաբեկին ու Չաքարե ամիրսպասալարին, ճորտ պարուհի Նաթելլային, իմաստախոս ծերունի գուսան Շավթելին ու մյուս յոթ գուսաններին, որոնց մրցույթ մեջլիսում հաղթում է Շոթան, իրար է հանգուցում մարդկային զգացմունքներ ու ճակատագրեր, ստեղծում բարդ կոնֆլիկտներ, որոնք թելադրում են պատմական իրադարձություններին զուգահեռվող սիրային դրամատիկ գործողություններ: Պատմական անձնավորությունները կերպավորված են որպես միս ու արյուն ունեցող մարդկային բնավորություններ՝ իրենց զգացմունքային աշխարհով, նպատակներով ու ձգտումներով, սիրով ու խանդով, անձնագիտության պատրաստակամությամբ, ինչպես նաեւ՝ խորհրդային ժամանակների սոցիոլոգիական գաղափարաբանության պարտադրած դասային խստագույն տարբերությունների՝ արքայի եւ ճորտի, ծառայի եւ իշխանի հարաբերությունների անհաշտելիության սուր գիտակցությամբ, որոնք, պարզվում է, ունեն գերազանցապես անձնական բնույթ:

*Շարունակելի
Սամվել ՄՈՐԱՎՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*



Սկիզբը՝ թիվ 18-21, 24

Ներքին հանգի առատությունն աստիճանաբար նրա խոսքին հաղորդում է մի յուրահատկություն. ներքին հանգի միջոցով տողը բաժանվում է ներդաշնակ չափական շարքերի եւ ստանում ինքնուրույն գոյություն. «Ներքին հանգը ռիթմական ինքնուրույնություն է տալիս կիսատողին, վերածում է այն առանձին միավորի: Դրա շնորհիվ մեծանում է բանաստեղծության տողերի քանակը, իսկ նկարագրությունը կարծեք ծավալվում է «խորությամբ եւ լայնքով», - գրում էր Էդվարդ Ջրբաշյանը («Պատմաբանասիրական հանդես», 1965, թիվ 1, էջ 158):

Շիրազի կշռության կիսատողի առկայությունն առաջին հերթին պայմանավորված է տողը կամ կշռության պարբերությունը հնչյունական ներքին կայուն դաշնակով հագեցնելու հանգամանքով: Հնչյունական դաշնակի ներքին կայուն հաճախականությունը կիսում է տողի փակ ամբողջությունը, այն բաժանում մասերի, որոնք մեծ մասամբ ունենում են չափական եւ հնչյունական համաչափություն: Եթե նկատի ունենանք, որ Շիրազը ներքին հանգ ստեղծում է հիմնականում գլխավոր հատածի, իսկ հաճախակի էլ՝ երկրորդական հատածների՝ անդամների միջբաժանների մոտ, ապա ավելի մատչելի կլինի պատկերացնել, թե որքան մեծ նշանակություն ունի կիսատողի ինքնուրույն հանդես գալը նրա պոեզիայում: Ներքին հանգով կիսված տողեր ունեցող բանաստեղծությունները հիմնականում ունեն կից հանգավորում: Կից հանգավորումը հնչյունական տեսակետից ամենանպատակահարմարն է՝ տողերը կիսելու համար, որովհետեւ, ասենք՝ խաչածեւ, օղակածեւ հանգավորումներով, հնչյունական պարբերությունը որպես կշռության միավոր մեծանում է, տողերի փոխկապակցվածությունը խիստ ուժեղանում, եւ տողերի կիսումն այս դեպքում խանգարում է ամբողջ գործի համակարգը: Հանգակցման կից կարգն առավել հնարավոր

ություններ ունի: Հնչյունական պարբերությունն այստեղ երկու տող է, ներքին բաժանումն առանձին կիսատողերի՝ չի գրկում գործն իր հատկանշական չափից: Վերցնենք մի հատված «Հրազդան» պոեմից.

*Էն Գեղամա սարերն ի վար,
Էն չոր, ամա քարերն ի վար՝
Իմ դարերի մրմունջն անքուն,
Իմ վաշն,
Իմ հունչն,
Իմ հին շանգուն՝
Քարափների ձյունից ծնված,
Փրփրաբարուր ձագերն առած-
Փախած ցավից,
Դավ-անձավից,
Հազար ցավի ձենով գալիս-
Մինչեւ Մասիս՝ ձայն էր տալիս...*

Չափածո կառույցն այստեղ ունի ներքին արագ զարգացում, ինչը խոսքին հաղորդում է արագահոս ընթացք: Ներքին հանգի միջոցով կիսվելով՝ տողերը այլեւս չեն ծավալվում, չեն երկարում, այլ կարճ, հատու առոգանությամբ, անընդհատ շարժվում են առաջ՝ մշտական հոսքի մեջ պահելով խոսքը: 4-5-րդ տողերում անգամ կիսատողն է հանգով տրոհվել:

Շիրազի խոսքի չափական, հնչյունական, շարահյուսական-հնչերանգային ամբողջ կառույցն աստիճանաբար կայունանում է: Փաստորեն՝ Շիրազի տողերը, տեղը կառուցվում են համանման չափական եւ հնչյունական ձեւերի կրկնությամբ: Համանման կառուցվածքների դեպքում խիստ կայունանում է խոսքի չափական, հնչյունական, կշռության շարժման հաճախականությունը:

Հանգային կրկնակների, հնչյունական հարուստ ցանցի ստեղծման տեսակետից հարուստ աշխարհ է Շիրազի պոեզիան եւ այս տեսակետից ավելի մանրակրկիտ ուսումնասիրության պահանջ ունի:

Համո Սահյանի հանգը երգում է: Մտքի մեջ իրար գտած եւ պատկերային իմաստավորում ստացող երկու հանգաբառն արդեն իսկ բանաստեղծություն հորինելու նախապայման է: Դրա համար էր գրում՝ «Առաջին տողը աստված է տալիս», իսկ հետո արդեն երկուների դժվար պահերն են գալիս: Աստվածային առաջին տողի մեջ նաեւ հանգն է, ինչն իր երգեցիկ անդրադարձներով հոսում, գրնգում է հաջորդ տողերում:

Սահյանի պոեզիայում հնչյունական կշռության ունի կառուցվածքային կարեւոր դեր: Նրա հանգը բազմազան չէ, բայց հնչեղ է, հնչյունական դաշնակն ավելի միաձայն է, բայց տողեր կապակցող: Տողաչափերի անդամավոր բարդումներն նա քիչ է օգտագործում, նրա խոսքի կշռության իրանքը կարգավորող ուժ են կիսատողը կամ տողը: Հանգը ծառայում է չափական այդ հատկությունները հնչյունական դաշնակով կառուցելու, կարգավորելու եւ ամփոփելու գործին: Չափական, հնչյունական, հնչերանգային համանմանություններն այնքան

նույնական են, որ խոսքի ներդաշնակ երգեցիկ-մեղեդային զգացողությունը գրեթե նույնությամբ, տարրերի նույնական կառուցվածքով կրկնվում ու վերակրկնվում է մյուս տներում՝ առաջացնելով չափական-հնչյունական ալիքի նույնատեսակ շարժում: Սահյանի ներշնչանքի պահին՝ հավասար տեղողության ընթացքում, կազմավորվում է չափական նվագագույն միավորը, այնուհետեւ այդ հավասար չափական շարքը որոշակի կայուն տեղերում ամրապնդվում է հնչյունական դաշնակով (ներքին հանգ, վերջնահանգ), որոնք եւ դառնում են խոսքի չափական ընթացքը կարգավորող գործոններ: Բանաստեղծության չափական բաժանումները հնչյունական ամուր դաշնակով ամրապնդելու յուրահատկությունը Սահյանի պոեզիայում դառնում է խոսքի ընդհանուր կշռությամբ ձեւավորող գլխավոր հատկանիշ: Իսկ քանի որ այդ հնչյունական համանմանությունները մեծ մասամբ ստեղծվում են տողամիջում եւ տողավերջում, այդ իսկ պատճառով էլ չափական հիմնական միավորները դառնում են կիսատողը կամ տողը: Սահյանի պոեզիան կառուցվում է նույնատիպ բառածեւերի, արտահայտությունների կրկնաբերմամբ, տաղաչափական առանձին միավորների՝ գլխավորապես հնչյունական կազմի միանման հաճախականությամբ: Կիսատողերում եւ տողավերջում հանգի առկայության նման կարգը հանդես է գալիս որպես համաչափ կրկնության պարբերական ազդանշան եւ ձեւավորում խոսքի տաղաչափությունը:

Սահյանի պոեզիայում հատկապես առատ կիրառություն ունի իզական հանգը, իզական հանգի հնչերանգը տարբերվում է հայերենին հատկանշական արական հանգերից: Դրանով, կարծեք, կիսատողը կամ տողը ներքուստ ավելի փակ ու ավարտուն են դառնում: Այսպես.

*Իմ ապրած կյանքը / խառն ու երկար է,
.....ա.....բ
Շարը ընդվզում էր / ամեն մի քայլը,
.....բ.....ա
Չար էր ոտիդ, / երկինքը քար էր,
.....ա.....բ
Հեռու, հեռու էր / աստղերի փայլը:
.....բ.....ա*

Կիսատողերը եւ տողավերջը կազմված են իզական հնչեղության հանգերից: Պարզ երեւում է չափական նվագագույն միավորի՝ կիսատողի համաչափ ու ներդաշնակ դասավորության կարգը: Այսպիսի դեպքերում Սահյանը երբեմն ձգտում է ավելի ճոխացնել ու հարստացնել հանգային դաշնակը՝ խորացնելով հանգակցվող բառերի նեցուկի նույնատիպ հնչյունների քանակը:

Այսպիսի կառույցները ենթադրում են շարահյուսական-հնչերանգային, չափական, հնչյունական հատկությունների համընկնելիություն, միասնություն, իսկ դա կատարվում է ենթագիտակցության մեջ խոսքի տարբեր բաղադրիչների միաժամանա-

կյա տրոհմամբ ու կազմավորմամբ: «Քնարական բանաստեղծության կառուցվածքը ենթադրում է եւ հնչյունաբանական, եւ շարահյուսական, եւ բովանդակային նյութի միաժամանակյա օրինաչափ մասնատում», - գրում է Վլադիմիր Ժիրմունսկին (В. Жирмунский, Композиция лирических стихотворений, П-6г, 1921, էջ 7), հակառակ դեպքում, այսինքն՝ այդ բաղադրիչների անհամընկնելիության ժամանակ, կառաջանա մասերի անհամաչափություն, կվերանա նմանությունը, կկորչի, կխաթարվի երգեցիկ-մեղեդային հնչերանգը: Սահյանի պոեզիայում միշտ էլ պահպանվում է մասերի այդ համաչափ դասավորությունը: Հնչյունաբանական, չափական, ընդհանուր առմամբ կառուցվածքային նման տեսակների համաչափ կրկնությամբ Սահյանն ստեղծում է չափածո խոսքի ինքնատիպ հյուսվածք, ինչն առաջին հերթին բանաստեղծական երաժշտություն է, բառերի մեղեդի:

Իզական հանգը լայնորեն կիրառում էր նաեւ Գեորգ Էմինը: Նրա որոշ գործեր ամբողջությամբ գրված են իզական հանգերով («Տեքստիլ գործարանում», «Չորույց Վենետիկի հետ»), իսկ շատ գործերում իզական հանգերը խիստ գերիշխող են («Իմ գործը», «Պարտքը», «Անցորդները», «Ձեռքը»): Թերեւս իզական հանգի այսպիսի հաճախադեպ օգտագործումն էր պատճառը, որ դրանք ժամանակին որակվեցին միակերպ ու տհաճ (տե՛ս Ս. Աղաբաբյան, Հ. Թամրազյան, Նոր ճանապարհի համար, «Գրական թերթ», 1949, թիվ 31): Ինչ խոսք, իզական հանգը հայերենում ստեղծում է հեշտ հանգաբանություն: Սակայն Էմինի կիրառած վանկաշեշտական համակարգի համար իզական հանգի առկայությունն արդարացվում է: Եռավանկ միջնաշեշտ ուղերն ունենում են իզական կազմություն, այդպիսի ուղերի կիրառությունն Էմինի պոեզիայում իշխող է, ահա դրանով էլ պետք է պատճառաբանել իզական հանգերի առատությունը: Իսկ հնչման միակերպությունը խզելու համար նա փորձում է բազմաձայն դարձնել հանգաբառերի նեցուկի դաշնակը («Բալլադ ձկնորսի մասին»).

*Երգո՛ւմ էր / ձկնորսն ու / հիշո՛ւմ իր / հին տո՛ւնը.
«Թողե՛լ եմ / ու եկե՛լ / մուլբե՛րը...»:
Բայց լո՛ւռ է / սիւյո՛րը / հայա՛ցքը / ժպտո՛ւմ է,
Թե՛ւ թա՛ց / են կապո՛ւյտ / աչքե՛րը:*

Ավելացնենք, որ իզական հանգեր նա առատորեն կիրառում է նաեւ վանկական համակարգի գործերում՝ որոշ դեպքերում («Առանց քեզ») առաջացնելով ներքին հանգով անջատված կիսատողեր:

Ընդհանուր առմամբ՝ Էմինը կարողանում է հանգային օղակման մեջ մտնող բառերը չկտրել ասելիքի տրամաբանական, իմաստային զարգացումից, բառերը չդարձնել զարդանախշ:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Խնուս

Սկիզբը՝ էջ 7

Սակայն գենքի եւ գինամթերքի պակասը հարկադրեց խնուսահայությանը նահանջել: Չինյալ հայկական խումբը նահանջելիս Գոպալ գյուղի մոտ Նոր համարվում ստացավ: Նրանց միացավ գոպալցիների զինված խումբը՝ Տեր-Ավետիսի տղաների՝ Սեդրակի, Միսակի եւ Կարապետի տղայի՝ Մովսեսի ղեկավարությամբ: Նրանց հետ էին նաեւ Գորգմազյան Նազար տղայի տղաները՝ Արամն ու Տիգրանը:

Խումբը Գոպալից Տոբախան-Քեշիշյան գյուղերի վրայով անցնելիս հանդիպեց Խալիլ բեյի հետնապահ ջոկատին, որի հետ կռվի ընթացքում սպանվեց Գովանդուկի ռես Միտի տղան՝ Դավիթը: Նա, լինելով հին հեղափոխական, 101 տարվա դատավճռով բանտարկվել էր Կարինում եւ ազատ էր արձակվել 1908 թ. սահմանադրությամբ:

Չինյալ խումբը, Արածանի գետի ափին հասնելով, ծառերից լաստեր պատրաստեց եւ դրանց կառչած անցավ գետը, ոմանք էլ՝ լողալով՝ առանց արկածներից զերծ մնալու: Փրկվածները, դիմելով ռուսական զինվորական ղեկավարությանը, հանձնվեցին նրանց: Ինչպես մնացած դեպքերում, այս անգամ եւս Գարաջոբանի հայության շարժական եւ անշարժ գույքը թալանվեց: Խնուսի շրջանի Գարաջոբան գյուղի վիճակային փոխանորդ Կարապետ քահանա Տեր-Յովհաննիսյանի տված տեղեկության համաձայն՝ 15 հոգանոց խմբով նա եւս դիմել է ինքնապաշտպանության: Դա տեղի է ունեցել այն բանից հետո, երբ իր աջերով կարողացել է գյուղի մյուսներին ուղարկված հեռագիրը, որտեղ ասված էր. «Տերուբենեն

իրամայում է, որ հայերի բոլոր ինչքը են կին ու աղքիկները խլալն կը պատկանին: Կոտորոցե՛ն հայերը եւ ռուս բանակն առջեւն մի փախչիք, այլապես դուք եւս հայերու պես պիտի կոտորուիք»:

Հեռագիրը կարդալուց անմիջապես հետո նա կանչեց բոլոր գյուղերից այստեղ ապաստանած մարդկանց, եւ դրությունը պարզելով՝ հորդորեց դիմել ինքնապաշտպանության, մինչեւ որ հնարավորություն ստեղծվի Մանազկերտ փոխելու եւ ռուսական զորքին միանալու: Կարապետ քահանա Տեր-Յովհաննիսյանը նկարագրում է, թե ինչպես ինքնապաշտպանության դիմելով՝ 15 հոգու գլուխն անցած, զինված, պատռելով քրդերի շրթան, գյուղից դուրս գալով՝ Դերը կյուղի մոտ միացավ

իր եղբոր՝ Սիմոն Տեր-Յովհաննիսյանի խմբին, ապա ռուսական բանակի կազմում մասնակցեց ռուս-թուրքական պատերազմին: Միայն Դերը կյուղի մոտ նրանք 500-ի չափ քրդեր խորոցեցին, ապա ռուսների հետ միասին մտան Մանազկերտ: 1915 թ. հուլիսյան նահանջի ժամանակ նրանք ապաստանեցին Կարսի բերդում, ուր մնացին մինչեւ փետրվարի 18-ը, ապա միանալով խնուսցիներին՝ մտան 6-րդ կամավորական գնդի մեջ եւ մասնակցեցին Երզրումի գրավմանը՝ տալով 3 զոհ: Խնուսի վերստին գրավման ժամանակ ողջ մնացած գարաջոբանցիները գյուղ վերադարձան՝ իրենց ընտանիքները փնտրելու, սակայն չգտնելով՝ այնտեղ հիմք դրին 20-ի չափ Նոր տների՝ ամուսնանալով գաղթական խնուսցիների հետ:

Էդիկ ՄՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 15.1.2016թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ